

ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Ի նշանավորումն հայկական գրերի ստեղծման 1500-ամյա հոբելյանի, նշանավոր լեզվաբան, բանասեր, բառարանագիր Ստեփան Մալխասյանցը (1857—1947) 1902 թ. «Մշակում» (հոկտեմբերի 27, 31 և նոյեմբերի 1-ի համարներում) տպագրած «Հին դարերից» վերնագրով հոդվածաշարքում առաջարկում է ժամանակագրական կարգով հրատարակել հայ հին և նոր պատմագիրների լիակատար ժողովածու՝ «Պատմագիրք հայոց» խորագրով: Ըստ այդ մտահղացման, հինգ հատորով հրատարակվելու էր հիսուն հեղինակի աշխատություն: Ծուռով մատենաշարի հրատարակության համար ստեղծվում է խրմբագրական հանձնաժողով, որի անդամներ են ընտրվում հայագետներ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան. 1860—1918) և Գաբեգին Հովսեփյանը (1867—1952), իսկ ընդհանուր խմբագիր՝ Ստեփան Մալխասյանցը: Խմբագրական հանձնաժողովը եռանդուն գործունեություն է ծավալում «Պատմագիրքը» կյանքի կոչելու համար, բայց բազմապիսի ու տարաբնույթ մի շարք հանգամանքների պատճառով նախնական որոշումը չի իրագործվում, և մատենաշարի գրքերից հրատարակվում է ընդամենը երեքը. 1904 թ. Գալուստ Տեր-Մկրտչյանի և Ստեփան Մալխասյանցի աշխատասիրությամբ լույս է տեսնում Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոց» և Թուղթ առ Վահան Մամիկոնյան» գիրքը, խմբագրական հանձնաժողովի հանձնարարությամբ 1909-ին Գալուստ Տեր-Մկրտչյանը և Ստեփան Կանայանը հրատարակում են Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոցը», իսկ 1913-ին Մանուկ Աբեղյանը և Սեթ Հարությունյանը՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

Ստորև հրապարակվող նամակները ուղագրով նյութեր են «Պատմագիրք հայոց» մատենաշարով հրատարակված գրքերի ստեղծման պատմության մանրամասները լուսաբանելու առումով: Դրանք շոշափում են նաև պատմագիրների աշխատությունների հրատարակության հետ կապված բնագրային, ուղղագրական, հայագիտական որոշ հարցեր, պարունակում են հետաքրքիր փաստեր ժամանակի հասարակական կյանքի վերաբերյալ, նամակները միաժամանակ անփոխարինելի վավերագրեր են Մալխասյանց-գիտնականի ազդեցության կյանքն ու գործունեությունը ուսումնասիրելու համար:

Խնդրո առադկա նամակները պահվում են ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) Գալուստ Տեր-Մկրտչյանի արխիվային ֆոնդում (թղթ. 24):

Ա. Հ. ԶԱՔԱՐՅԱՆ

1

13 դեկտեմբերի, 1992

Թիֆլիս

Դալուստ.

Անհետաձգելի երկու հոդվածների պատճառով՝ մի քիչ ուղացրի ուղարկել ստորագրելու այն նամակները, որ պետք է ցրենք Պատմագրքի համար նվերներ խնդրելու:

Սրա հետ ուղարկում եմ սույն հինգ նամակ, անուն ներս<խաչան> դպրոցի հոգաբարձույան, Ս. Պետրերուրգի Հայոց եկեղեցիների խորհրդին, Արիստակես արքեպիսկոպոսին, Կար. Նզյանին և Սմբատ Շահապիրին: Խնդրում եմ՝ շատ շուտով ստորագրեք երկուսդ² և ուղարկեք ինձ, որպեսզի հայտագիրը մեջը դնեմ և մինչև դեկտեմբերի> 22-ը ուղարկեմ ըստ պատ-

կանխելու: Ոսովհետև դեկտեմբերի 23-ին ուղեորվելու համար Ախալցխա իմ կալվածք, ուր կանամ մինչև հունվարի 1-ը:

Հայտագրի մեջ, որ այսօր կուղարկեմ զբաղմունքիս, գետնոված են այս հողավածները: 1. Հրատարակության նպատակը և ձևակերպումը: 2. Հրատարակության մեջ մտնելիք հեղինակների անունները: 3. Ներքին հատկությունները (բաղ-դատություններ, ցանկեր): 4. Հատորները և պրակներով լույս տեսնելը: 5. Աշխատակիցների անունները և խմբագիրը: 6. Մոխար (տպագրության և աշխատակիցների վարձատրության) մո-տավորապես 20 000 ռ.: 7. Հրատարակության զուտ արդյունքի գործադրությունը (2 հավելված հատորների և ապա էջ՝ <իսկան> մոտենադարանի տնտիպ նյութերի հրատարակությունը): 8. Նվիրատուները և նվերները կտրվին: 9. Նրի ու մուտքի մասին հաշիվը կտրվի պարբերաբար և կհրատարակվի զրբի վերջում: 10. Հրատարակության ժամանակամիջոցը (սկսել 1903-ին, վերջացնել մոտավորապես 5 տարում) և 11. «Նովի ուղարկելու և ուրիշ տեղեկությունների հա-մար դիմելու է հրատարակության խմբագիր Ստ. Մովսիսյանցին» (հասցե): Այս վերջին հա-դեհն ավելի նպատակահարմար պատ, բանի որ տպագրության ծախսը այստեղ է կատարվելու և հաշվապահությունը պետք է այստեղ կենտրոնանա: Նրա հայտագիրը տպվի՝ կուղարկեմ մի քա-նի օրինակ՝ նրա տակ ապրվելու է հրեքիս անունը:

Ցանկալի է, որ դու էլ, Գարեգին⁴ վարդապետն էլ հիշեք մի բանի անուններ, որոնց կարե-լի է դիմել այս նպատակով: Ես աչքի տեսա ունեմ զեռ մի բանիսին էլ. օր. 4. Պոլսի Հայոց պատրիարքին, Մանկունի եպիսկոպոսին⁵, տիկին Քանանյանին, տիկին Նզիսարեթ (?) Սարգս-յանին (Բարու), Մոսկվայի էպարքոսն ճամարանին (որի համար նախ ուղում հմ գրել ու խոր-հուրդ հարցնել նախախնայցից⁶) և մի բանի անձնական ծանոթներին⁷: Ի՞նչ խորհուրդ եք տա-լիս. ի՞նչ նոր անուններ եք առաջարկում: Եթե հարմարություն կա՝ աշխատե՛ք էլ արտագրեցիք (կամ գրեցե՛ք) այսպիսի մի բանի դիմումներ և ինձ ուղարկեցե՛ք, որ ես էլ ստորագրելով և հայ-տագիրը դնելով ուղարկեմ:

Վեհափառից⁸ կոնդակն ստացա, բայց չեմ հավանում գրվածքին. ի միջի այլոց առված է, որ մենք ձեռնարկում ենք հայ պատմագիրների կենսագրության: Բարեկենդանին, երբ էջմիածին գամ, գուցե հաշտեցնենք որա փոխարեն մի ուրիշ կոնդակ խնդրել՝ ավելի համապատասխան բովանդակությամբ:

Նորայր Բյուզանդացուց դեռ պատասխան չեմ ստացել (24-րդ օրն է այսօր՝ նոյսի 1-ը): Չգիտեմ ինչո՞վ բացատրել:

Պ. Արևիկյանը¹⁰ հայտնե՛ց իր պայման(ներ)ը, և ինչպիսի է կամ են:

Արդյոք սկսե՞լ եք աշխատանք: Կորյունը ստացա՞ր և համեմատությունը վերջացրի՞ր: Ա-ռաջին տպագրությունը Կորյունը պետք է լինի¹¹, որի համար և մի առաջաբան պետք է գրվի՝ անկախ Կորյունի առաջարանից, բնդհանուր հրատարակության վերաբերյալ:

Բարեւում հմ քեզ և բարեկամներիս: Սպասում հմ նամակիդ և ուղարկածներին անհապաղ վերադարձնելուն:

Քն Ստ. Մովսիսյանց

1 Արխատակես Սևդրակյան (1845—1906)—հոգևորական գործիչ, բանասեր, մանկավարժ:

2 Նկատի ունի Գալուստ Տեք-Մկրտչյանին և Գարեգին Հովսեփյանին:

3 Հայտագրի մեկ օրինակը պահվում է Մատենադարանում (Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ա, վավ. 183): Ահա այն.

«ՀԱՅՏԱԳԻՐ»

«ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ի հիշատակ հայոց Գրերի Գլուխի 1500-ամյակին, որ լրանալու է 1904 թվին, մենք ձեռ-նարկում ենք հրատարակելու հայոց հին պատմագիրների լիակատար ժողովածուն՝ ՊԱՏՄԱ-ԳԻՐՔ ՀԱՅՈՑ բնդհանուր վերնագրով, նվիրված հայոց գրերի հնարողի, Ս. ՄԵՍՐՈՊ-ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ:

2. Պատմագիրքը բովանդակվելու է հետևյալ հայ պատմագիրների լիակատար բնագիրներով՝ ժամանակագրական կարգով.— Կորյուն, Ազաթանգեղոս, Փավստոս, Նզիշ, Ղազար Փարպեցի. Մովսես խորենացի, Սևրեոս, Հովհան Մամիկոնյան (Ջենոբ Գլակ), Ղևոնդ երեց, Թովմա Արծ-

* Սուբխա արքեպիսկոպոսին⁷ գրավե՞ր դիմենք, թե՞ հայր Գարեգինը անձամբ դիմե-լիս անունից:

բունի, Հովհաննես կաթողիկոս, Ուխտանես, Մեսրոպ երեց, Ստեփանոս Ասողիկ, Արիստակես Լաստիվերտցի, Ներսես Շնորհալի (Ողբ Նդեսիո), Կիրակոս Գանձակեցի, Մովսես Կաղանկատ-վացի, Սամվել Անեցի, Վարդան Բարձրբերդցի, Մատթեոս Ուռհայեցի, Մխիթար Անեցի, Մա-դարիա արևդա, Սմբատ Գունդստաբլ, Մխիթար Այրիվանեցի, Ստեփանոս Օրբելյան, Հեթում պատմիչ, Աբուլաշի, Գրիգոր Խլաթեցի, Թովմա Մեծոփեցի, Մինաս վարդապետ Համդեցի, Հով-հաննես ավագ երեց Կամինեցո, Առաքել Դավրիժեցի, Զաքարիա ստրկավագ, Ավգոստինոս Բա-ղեջի, Լուայի Հասան-Ջալալյան, Պետրոս դի Գիլանեց, Դավիթ Բեզ (Ստ. վ. Շահումյան), Աբրա-համ Կրետացի, Սիմեոն կաթողիկոս (Ջամբո), Զաքարիա Ազուլեցի, Թովմա հոջամալյան, Ժամանակագրություն (Մանանյից)։ Հովհաննիսիկ վարդապետ, Սիմեոն Ապարանցի։ (և ձեռ-գիրներեց) Վահրամ բարունի, Մարտիրոս Երզնկացի, Երեմիա Զելեպի, Մադարիա Ճեվահիր-սյան, Ավետիք Երեց Ղափանցի։ Գուցե և ուրիշ հեղինակներ, որոնք կարող են հայտնվել հրա-տարակության ընթացքում։

3. Հրատարակությունը պետք է լինի ընտիր՝ ներքուստ և արտաքուստ։ Հեղինակները կո-րագրատվին Ս. էջմիածնի Մատենադարանի ձեռագիրների հետ (որի համար ստացված է Վե-հափառ կաթողիկոսի բարեհաճ թույլտվությունը) և կտպագրվին ձեռագիրների լիակատար վա-րիանտներով՝ ամենայն հավատարմությամբ։ Բացի սրանից՝ կուղղվին նրանց մեջ սպրդած ա-ղավաղությունները, որոնք նկատված են բանասիրական քննադատության կողմից։

— Յուրաքանչյուր հեղինակից առաջ կղրվին հակիրճ և ստույգ տեղեկություններ՝ վերա-բերյալ նրա անձին և նրա աշխատության տպագրությանը, բաղդատված ձեռագիրներին և այլն. իսկ յուրաքանչյուր հեղինակից հետո կղեկոծվի մանրամասն և ճիշտ ցուցակ նրա պատմության մեջ գործածված հատուկ անուններին։

4. Ամեն մի հեղինակ լույս կտեսնե առանձին, յուր հատուկ թվահամարով, այն կերպով, որ յուրաքանչյուրը յուր թվահամարով դեանդվելով՝ ամբողջ հրատարակությունը կաղմն հինգ մեծադրի հատոր, ամեն մեկը բաղկացած մոտ 1000 երկսյունակ երեսներին։

5. Հրատարակության աշխատակցել արդեն հանձն են առել՝ Գարեգին վ. Հովսեփյան, Կա-րապետ վ. Տեր-Մկրտչյան, Սահակ վ. Ամատունի, Մեսրոպ և Ներսես արեղաներ, Միսբան Գա-լուստ Տեր-Մկրտչյան, պ. պ. Աբեղյան Մ., Կանայան Ստ., Կոստանյան Կար., Մալխասյանց Ստ., Մանանդյան Հակ., Հարությունյան Սեթ։ Հրավիրված է նորայր Բյուզանդացի։ Երբ հարկը պա-հանջե՞ն՝ կհնդրվի և ուրիշ մասնաղետների աշխատակցությունը։ Գործի ընդհանուր հսկողությու-նը ստանձնել է Ստ. Մալխասյանց։

6. Հրատարակության ամբողջ ծախսը՝ թե՛ տպագրությունը և թե՛ աշխատակիցների վար-ձատրությունը, հաշված է մոտավորապես 20 000 ուրլի։

7. Ծախսը ծածկելուց հետո՝ հրատարակությունից մնալիք բոլոր արդյունքը, դրամով կամ գրքով, կհատկացվի տպագրելու երկու Հավելված հատոր, որոնց առաջինի մեջ կմտնեն օտա-րագրի պատմագիրներ հին հայերեն թարգմանությամբ (Լուրուրնա, Եվսերիոս Կեսարացու Ժամանակագրություն, Սոկրատ, Միքայել Ասորի և այլն), իսկ երկրորդի մեջ՝ ընտիր հայ հե-ղինակներ՝ ոչ պատմական բովանդակությամբ (Եղնիկ, Անանիա Շիրակացի, Մխիթար Գոշ, Գր. Մագիստրոս և այլն)։ Այնուհետև բոլոր հրատարակությունը, թե՛ բուն Պատմագիրքը և թե՛ Հավելված հատորները, կվաճառ սեփականություն Ս. էջմիածնի Մատենադարանի, որի ար-դյունքով հետզհետե կտպագրվին այդ Մատենադարանի անտիպ նյութերը։

8. Ամեն մի նվիրատվություն, պայմանավոր թե՛ անպայման, կհիշվի հրատարակության ընթացքում, և հրատարակությունը վերջանալուց հետո կղրվի նվիրատուների լիակատար ցու-ցակը։

9. Հրատարակության ելքի և մուտքի մասին պարբերաբար հաշիվ կտրվի, և հրատարակու-թյան վերջում կտպվի մանրամասն հաշիվ։

10. Հրատարակությունն սկսվելու է 1903-ին և վերջանալու է մոտավորապես հինգ տար-վա ընթացքում։

11. Հրատարակիչներից մեկի հեռանալու դեպքում՝ մնացած երկուսը հրավիրում են եր-րորդ անգամ՝ հավասար իրավունքներով։

12. Թե՛ նվերներ ուղարկելու և թե՛ ուրիշ տեղեկությունների համար դիմելու է խմբագրին՝ Ստ. Մալխասյանցին (Ищущи, Армянская Семинария Нерсисян, Степану Малхасянцу կամ Tillis (Caucase), Seminaire Armenien Nersissean, Stépan Malchasseantz).

Հրատարակիչներ՝ Գարեգին վարդապետ Հովսեփյան, Միսբան Գալուստ Տեր-Մկրտչյան (էջմիածնում) և Ստեփան Մալխասյանց (Թիֆլ.)։

4 խոսքը Գարեգին Հովսեփյանի մասին է։

- 5 Վահրամ Մանկունի (1846—1920)—Հոգևորական, մշակութային գործիչ։
- 6 Նկատի ունի Գրիգոր Խալաթյանցին (1858—1912)։
- 7 Նուրիսա Պարպյան (1837—1914)—Էջմիածնի միաբանության անդամ, Երևանի թեմի ուսուցիչական ժողովանոցի, բանասեր, մանկավարժ, Եկեղեցական-Հասարակական գործիչ, Նրսիս գրամական միջոցներով էն տպագրվել «Պատմագիրը Հայոց» մատենաշարի գրքերը։
- 8 Նկատի ունի Խրիմյան Հայրիկին (1820—1907)։
- 9 Նորայր Բյուզանդացուն գրած այդ նամակը տե՛ս Մատենադարան, Նորայր Բյուզանդացու արխիվ, թղթ. 235, վավ. 26։ Ավետիք Ազատյան. Հայագիտության հարցերը Ստեփանոս Մալխասյանցի նամակներում («Բանբեր Հայաստանի արխիվներ», 1969, № 1, էջ 73—74)։
- 10 Նկատի ունի Մանուկ Արևելյանին (1865—1944)։
- 11 «Պատմագիրը Հայոց» մատենաշարով Կորյունը չի տպագրվել։ Առաջին Հրատարակությունը եղել է Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոց և Թուրքիայի Վասն Մամուլական» գիրքը (1904)։

2

23 դեկտեմբերի, 1902
Թիֆլիս

Սիրելի Գալուստ,

Ստացա ՚. Գարեգին վարդապետից ձինգ նամակները՝ ստորագրված, նույնպես և նրա նամակը, որով հայտնում է ի միջի այլոց, թե Երկուսը էլ համաձայն եք այն նամակիս, որ գրեց էի քեզ, Երեկ ուղարկեցի նամակներից 4-րդ, մի-մի հայտագիր մեջը պատժ ներսիսյան դպրոցից՝ Կառնիցի մոտ, որպեսզի տոներին հետո հանձնեմ (տոներին նիստ չէ լինում, իսկ տալ ալմաստեն և հարցը բերնե-բերան ձգել՝ համար չհամարեցի)։ Սուրենյան սրբազանը՝ գալիս է, շիրտում նա ինչպե՛ս կվերարկվի այս գործին։ Արտեն վարդապետը շատ ցանկացող էր և ստում էր, որ ինքը ուզում էր 25 ա. նվիրել Հրատարակության համար Հայտագրից մի օրինակ էլ սրա հետ եմ դնում՝ ծանոթանալու համար։ Երբ ՚. Գարեգինը գա՝ նորան մի քանի օրինակ կտամ։

Ախալցխայից ես կվերադառնամ հունվարի 5-ի Երեկոյան. հույս ունեմ, որ 6-ին ՚. Գարեգինը դեռ աչտեղ կլինի և կխոսենք։ Համենայն դեպս լավ կլինեք, որ մի քանի օրինակ նամակների Երկուսից ստորագրած այստեղ ուղարկեիր, որպեսզի ես էլ ստորագրելով՝ ճանապարհելի։ Երանով գործը կհեշտանար և կարագանար։

Այսօրվա թվով նամակներ գրեցի՝ Նորայր Բյուզանդացուն՝ խնդրելով պատասխան, որ մինչև այժմ չեմ ստացել²։ Դր. Խալաթյանցին՝ խորհուրդ և Լեւոնակ հարցնելով՝ Լազարյան հեմ.ին ղիմելու նկատմամբ։ Մեսրոպ վարդապետին³ որ աջակցի մեզ, որպեսզի Ս.Պ. Բ. Եկեղեցու խորհուրդը նպաստավոր վճիռ կայացնե մեր ղիմումի նկատմամբ, նույնպես և որ ինքն էլ իր կողմից աշխատի նպաստ գտնելու Այս երեքին էլ ուղարկեցի հայտագիր⁴։ Այս երկուսից խնդրեցի նաև աշխատասիրություն՝ երբ հնարավոր լինի։

Առ այժմ այսքան։ Շնորհավոր նոր տարի։ Բարև մերոնցից։

Քո Առ. Մալխասյանց

«Հ. Գ.» Մոռացա հիշել, որ ես գրեցի մանրամասն պատասխան պ. Ա. Ահարոնյանի հոգևածին⁵, մի առ մի հետքերով նրա ամեն մի առարկությունը։ Բայց ցավելով պետք է հայտնեմ, որ պատասխանս չէ կարող տպվել։ Խմբագրատանը գանազան կրճատումներով որոշեցին ենթարկել, և բավական անհամ խոսակցություններ ու դժգոհություն տեղի ունեցան այս առիթով իմ և Լևոնի մեջ։ Ես վերավերված՝ հետ վերցրի հոգևածու։ Երեք-չորս օր հետո Լեոն հարցրեց. «Ի՞նչ եղավ հոգևածու. ուրիշ գրություններ են գալիս այդ հարցի առիթով. բեր տպե՛ք. այլպես դուրս կմնաս բանակովի հոսանքից. դեմ կդրեն, պաշտպանող չի լինի»։ Ես պատասխանեցի, թե որոշել եմ շտապել նա նրան կարծում էր, թե հոգևածու կկրճատեմ, կհանեմ միջից մի քանի անհամաձայնություններ, և այնպես կտպվի։ Ես զիջում չեմ անի անհամբերություն։ Ինչևիցե-

Առ. Մ.

1 Նկատի ունի Թիֆլիսի թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Սարենյանին (1846—1930)։

2 Ստ. Մալխասյանցը Նոռայր Բյուզանդացուն «Պատմագիրը Հայոցին» աշխատակցելու առաջարկով գրել է երեք նամակ։ Վերջինս պատասխանել է միայն Երրորդ նամակին (տե՛ս Մալխասյանցին, Ն. Բյուզանդացու արխիվ, թղթ. 255, վավ. 24։ Ավետիք Աղամյան. նշվ. աշխ., էջ 76—77)։

3 Խոսքը էջմիածնի միարանության անդամ, հայագետ Մեսրոպ վարդապետ Տե-Մովսիսյանին (Մագիստրոս. 1865—1939) մասին է։

4 Առաջին և երկրորդ նամակներում նշված՝ նամակ-հայտագիր ուղարկված որոշ անձանց դործողություն-պատասխանների մասին տե՛ս Գ. Հովսեփյանին ուղղած Ստ. Մալխասյանցի 31 հունվարի 1903 թվակիր նամակը (Մատենադարան, Գ. Հովսեփյանի արխիվ, թղթ. 95, վավ. 59։ Ավետիք Աղամյան. նշվ. աշխ., էջ 77)։

5 Նկատի ունի Ա. Ահարոնյանի «Մի առաջարկության առիթով» («Մշակ», 9 նոյեմբերի 1902) վերնագրով հոդվածը։ Հոդվածագիրը, խոսելով Ստ. Մալխասյանցի «Հին դարերից» («Մշակ», 27 հոկտեմբերի 1902, 31 հոկտեմբերի 1902, 1 նոյեմբերի 1902) հոդվածում «Պատմագիրը Հայոց» ընդհանուր խորագրով հայ պատմագիրների լիակատար ժողովածու հրատարակելու առաջարկության մասին, մի շարք պատճառարանություններով դա համարում է ավելորդ։ «Մշակում» այդ հարցի շուրջ տպագրվել են նաև Կար. Յաղուրյանցի «Վիճելի խնդիր» (22 նոյեմբերի 1902), Լ. Մարկոսյանի «Տվեք ամենակարևորը» (21 հունվարի 1903), Լեոյի «Մի վիճի շուրջը» (5 փետրվարի 1903) վերնագրերով հոդվածները։

3

26 մարտի, 1903

Թիֆլիս

Սիրելի Գալուստ.

Ամսիս 11-ին հայր Գաբրիելից ստացա մի նամակ, որով հայտնում էր, թե այդտեղ բոլորը, վեհափառը, Սուրիաս սրբազանը, բոլոր աշխատակիցները, դու, իհարկե, ինքն ևս, ցանկություն ունիք, որ Պատմագիրը այդտեղ տպվի։ Մի քանի օր առաջ գնացի այստեղ վեհափառի մոտ և տեսա, որ ոչ թե նա հայտնել է ցանկություն տպագրություն էջմիածնում կատարելու մասին, այլ այնպես առաջարկել են իրան, և ինքը համաձայնություն է հայտնել՝ պայմանավոր կերպով, որ տպվի այնտեղ, որտեղ ավելի ընտիր կարելի է տպել։ Ընդհակառակն, ինձ մի քուսի խոսքով համոզումը հայտնեց, որ էջմիածնում հաջող առաջ չի գնա այդ գործը, որ այդտեղ չորիշ գործեր էլ շատ կան, որ անհրաժեշտ է, որ իմ աչքս տպագրության վրա լինի ևն։

Հայր Գաբրիելին ևս մի ընդարձակ պատասխան գրեցի, որի մեջ պատճառաբանելով հանդերձ՝ հայտարարեցի իմ «non possumus»-ը։ Քեզ էլ կարճատուտ ասեմ խորին համոզումս. այդտեղ տպվելու դեպքում՝ անշուշտ կձգձգվի, տպարանական և խմբագրական թերություններով լիբլ կլինի, վերջապես չի ունենա այն վայելչությունն ու ներքին առավելությունները, որոնք այդ հրատարակության raison d'être-ն են կադմելու։ Այդպիսի պակասավոր գործի հետ ես չեմ կարող կապել իմ ունունը. մանավանդ այն խոստումներից հետո, որ հրատարակավ արինք։ Կամ պետք է որ տպագրությունն այստեղ կատարվի, իմ անմիջական հսկողության տակ, որտեղի ևս կարողանամ պատասխանատու լինել նրա ներքին և արտաքին հատկություններին, կամ — ես հրաժարվում եմ խմբագրի, վերահսկողի ու հրատարակչի կոչումներից ու պատասխանատվությունից։ Եթե այնքան մեծ է այդտեղ տպագրելու ցանկությունը, որ մինչև անգամ գործի տպագրությունը դորան զոհ է բերվում, ապա իմ փոխառեն թույլ եմ տալիս ընտրել երրորդ ընկեր-հրատարակիչ, ապա հրավիրել խմբագիր-վերահսկող՝ ում որ կամենաք։ Ես դարձյալ կմնամ գործին բարյացակամ և շատ ուրախ կլինեմ՝ եթե սա գրույս գա, թեկուզ առանց իմ անմիջական մասնակցության։ Գոռձ՝ ևս շատ կգտնեմ, թեկուզ գրերի գույտի հիշատակին նըվիրված։

Բայց ինձ թվում է, թե այդ ցանկությունը մասամբ արհեստական կերպով է մեծացրած։ Վեհափառի կարծիքը վերը գրեցի։ Սուրիաս սրբազանը դժվար թե հակառակ կարծիք ունենա, մանավանդ որ նա առանձնապես հետաքրքրված պետք է լինի այն գրքի առավելություններով, որ իր ծախսով սլետք է տպվի։ Աշխատակիցները այս հարցում իրավունք չունեն ձայնի. նրանք կարող են պահանջել, որ իրանց աշխատանքը անթերի և կատարյալ տպագրությամբ, հարա-

գատորեն լույս տեսնել և վարձատրությունը մենք ճշտվել հատուցանենք: Այս պահանջներին մենք բավարարություն կտանք, բայց մեզանից է կախված որտե՞ղ տպելու: Իրավունքի տերը հրատարակիչներն ենք: Եթե դու շարունակես մնալ այդ կարծիքում (էջմիածնում տպելու) ևս մենակ կմնամ, փոքրամասնություն, և այդ դեպքի համար արդեն գրեցի հրաժարականս, ինչպես քեզ, նույնպես և Գարեգին> վարդապետին. իսկ եթե դու, կամ երկուսդ էլ համակերպիս իմ ցանկություն (որ համաձայն է մեր նախկին որոշման), ապա կշարունակենք դործը՝ ինչպես որ խոսել վերջացրել էինք:

Ինձ զարմացնում է այս հարցում այն, որ հայր Գարեգինը և մանավանդ դու, հարյուրավոր փորձերից հետո, այդքան հավատք ունեք էջմիածնի տպարանի վրա. ումեն բան կարող է նրա մեջ լինել, բայց կարգ ու կարգապահություն չկա, չկան և ուրիշ շատ բաներ: Նոր հաստատված սասնածողովը չի փոխի դործը, կտեղծվի, կտեսնենք դուր էլ: Պատմապրի տպագրությունը Թիֆլիսից էջմիածին փոխադրել կարող է զանակալ, իմ համոզմամբ, նա, որ կամ ամենեկին ծանոթ չէ էջմիածնի տպարանի տեխնիկական և վարչական խոշոր պակասություններին, կամ որոշել է այդ ճանապարհով սպանել գործը, որպեսզի կամ գլուխ չկա ամենեկին կամ խախտառակվի: Գործից ձեռնթափ լինելը ինձ այնչափ ցավ չի պատճառի, որչափ նրա սպանվելը կամ խախտառակվելը: Այս է պատճառը, որ աշխատում եմ այդ վնասակար խորհրդի դեմ մարտնչել: Եթե այնուամենայնիվ չհաջողվի ինձ հետ կացնել Ձեզ այդ բանից, ապա ևս հանգիստ խղճով ձեռքերս կլվամ և կասիմ. «արյուն ձեր ի պլուխ ձեռք»:

Ես անհամբեր սպասում եմ, թե ի՞նչ վերջնական եզրակացություն կգար այդտեղ:

Կինս և ես բարեւում ենք քեզ: Հաղորդիր բարեւս տեր Մխիթարին¹, հայր Սահակին², պպ. Մանանդյանին³, Տիգրանյանին⁴ և ուրիշ բարեկամներին:

Քն Ատ. Մալխասյանց

1 Նկատի ունի Գ. Տեր-Մկրտչյանի եղբորը՝ Մխիթար վարդապետին:

2 Սահակ Ամատունի (1855--1917) — էջմիածնի միարանություն անգամ, բառարանագիր:

3 Խոսրը Հակոբ Մանանդյանի (1873--1952) մասին է:

4 Նկատի ունի էջմիածնի ձեռնարանի ղապախոս, բանասեր Միրական Տիգրանյանին (մահացել է 1937-ին):

15 հոկտեմբերի, 1903

Թիֆլիս

Միրելի Գալուստ.

Ղազար Փարպեցին արդեն հանձնել եմ տպարան և առաջին թերթի սրբագրությունն արդեն ստացել եմ. տառերը նոր են և գեղեցիկ: Երբ առաջին թերթը մաքուր տպվի՝ կուղարկեմ, որ հասկացողություն կազմեք տպագրության բոլոր հանգամանքների մասին:

Խնդրում եմ՝ Ազաթանգեղոսի համեմատությունը շարունակեք, որ, ինչպես լսեցի, բարձի-խողի եք արել: Եթե բնագիրը կազմելը, ժամանակի սղությամբ պատճառով, այդտեղ անկարելի լինի՝ ես ինքս հանձն կառնեմ կազմել. միայն թե համեմատությունը արած լինի: Փարպեցուց հետո պետք է տպենք Ազաթանգեղոսը. ուրեմն հարկավոր է հասցնել: Մի՞ մոռնար, որ երկու գրաշար են աշխատում, ուրեմն և գործը շուտ կվերջանա: Գործը սկսելուց հետո չէ կարելի կիսատ թողնել:

Նույնը խնդրեմ հայտնես և Եղիշի համեմատողներին: Եթե նրանց համեմատությունը պատրաստ է՝ ես հանձն կառնեմ բնագիրը պատրաստել:

Էրեկ նամակ գրեցի հայր Տաշյանին և խնդրեցի ինձ ուղարկել Փարպեցու Թղթի իրանց որինակի արտագրությունը կամ համեմատությունը, խոստանալով վարձատրություն, որովհետեւ նրանց օրինակում, ինչպես հ. Տաշյան հայտնում է «ցուցակում»¹, խոսքի ղապավորությունն աղելի լավ է, քան մեր ձեռագրում և տպագրիչների մեջ:

«Պատմագրի» առաջին հատորի համար խոստացված 6000 ռուբլուց, ինչպես քեզ հայտնի է՝ արդեն ստացել եմ 3196 ռուբլի: Մնացած 2804 ռուբլին, ինչպես տեղեկություն ստացա նրավորողից՝ կարգադրված է ինձ հասցնել մաս-մաս կամ միանվագ՝ առ առավել մինչև այս տարվա վերջը: Ես հետամուտ կլինեմ շուտով ստանալու: Ուրեմն առաջին հատորի՝ գրեթե ամբողջ ծախսը պատրաստ է. մնում է, որ աշխատակիցներս եռանդով շարունակենք սկսված այս ղեղեցիկ գործը:

նորից աշխատեմ եմ՝ անուշադիր շթողենս խնդիրս, ալ ինքդ ղգեորվես և ոգևորես մշուս աշխատակիցներին՝ կատարել ձեռագործերի համեմատությունները և յո առաջ ինձ նյութ հաս-
ցընել տպագրությանս Լ'արև լուրերիդ:

Քո Ստ. Մալխասյանց

1 Նկատի ունի 2. Տաշլանի «Յուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց
ի վիճակ» (Վենետիկ, 1895) աշխատությունը:

2 Խոսքը Սուրիաս արքեպիսկոպոս Պարգյանի մասին է:

3 «Պատմագիրք հայոցի» առաջին հատորի մեջ նախատեսված են եղի՝ Կորյուն, Ագու-
թանդեղոս, Փապսոս, Եղիշև և Խորենացի (ՏԵՄ Մատենադարան, Ն. Բյուզանդացու արխիվ-
ի դթ. 235, վաղ. 25: Ավետիքի և Կամսյան, նշվ. աշխ., էջ 75):

5

22 հունվարի, 1967

Թիֆլիս

Սիրելի Գալուստ,

Ուղարկում եմ այսօր Ղալար Փարպեցու շարունակությունը՝ 4 թերթ (6—9), երեքական
օրինակ՝ լեզ, Կանայանին՝ և Գարեգին վարդապետին: Տպագրութունը քիչ ծանր գնաց՝ տոնների
շաաճառով: Այսօր հետևեալ արագ կգնա:

Մնում է Փարպեցուց 4—4½ թերթ, որից 1½ թերթ արդեն շարված է. ուրեմն կես ամսվո
շաաճառ: Շտապի՛ր ուղարկել Ազատագրողը. Լթև Եկող կա՛ լավ է, ապահովության համար,
մարդու ձեռքով ուղարկել. դեռ պետք է գրաբնիշխին տրվի, որ նույնպես մի բանի օր կխլե-
նվում եմ, որ տպարանում պարապ չմնան:

Բաժանորդագրության հայտարարութունը մտածում եմ թողնել մարտի սկզբներին, երբ
Ղալ<ար Փարպեցին> արդեն դուրս եկած, նրա մասին լրագիրներում գոված և Ազատագրողը
սկսված կլինի Շտապելու կարիք չկա այս կետում: Գար<եգին> վարդապետը երեք քեզ հա-
ղորդած կլինի Սուրիաս սրբադանի նամակի բովանդակությունը. մնացորդ 2804 ոտքերին այս
մի բանի օրս (ոչ ուշ քան մի շաբաթվա ընթացքում) կստանամ Երևանի բանկի ճյուղից, այս-
տեղի առևտուր<ական> բանկի միջոցով: Բացի սրանից՝ սրբադանը խոստանում է հաջորդ հա-
տորներին համար էլ օգտակար լինել «բանիվ և գործով»: Մնաց. Մարտիրոսյանը² խնդրել է,
և ես խոսք եմ տվել, մի հաղաչ ուրբի իրան պարտք տալ մորհալով, տոկոսով. նա մեզ 6%
կվաթե, այնինչ ընթացիկ հաշվով 3% ենք ստանում: Պարտք կտամ 8 ամիս ժամանակով, աշ-
խիքն՝ մինչև որ մեզ պետք լինի: Այդ հաղաչը տալով՝ ինձ մոտ կմնա դարձյալ 2600 ռ., որ
միանգամայն բավական կլինի մեր պետքերին 8 ամիս ժամանակ:

Մի բանի խոսք pro domo nostra. Կանայանը այստեղ ինձ պատմեց մի խոսակցության
մասին, որ քեզ մոտ տեղի է ունեցել և որին դու քիչ ես մասնակցել: Ես Կանայանին պատաս-
խանեցի, խնդրելով որ քեզ էլ հաղորդե. այժմ էլի կարճառոտ կրկնեմ ասածս: Ղալար Փար-
պեցու վրա քո ունեցած աշխատանքը լիովին պետք է վարձատրված լինի թե՛ բարոյապես և
թե՛ նյութապես. իմ կողմից և ոչ մի առարկություն կամ դժկամություն չէ կարող լինել, և չի
լինի:

Բարոյական վարձատրությունը, որ պետք է արտահայտվի Քո աշխատանքն արձանագրե-
լով գրքի ձևատրին կամ առաջաբանում՝ թողնում եմ Քո լիակատար ցանկության, ինչպես Վա-
մենաս՝ այնպես կարտահայտեմ: Իմ կարծիքս (որը դու կարող ես շրնդունել, և ես առանց որեւէ
աճաճության կհամակերպեմ քո ցանկության) այն է, որ դու շախտք է կոչվես խմբագրող, ո-
րովհետև այս անվան հետ կապված է և պատասխանատվություն բնագիրը կազմելու, ընթերց-
վածքները ընտրելու և հարցերում, որ գուցե դու չկամենաս առնել քեզ վրա: Գրքի ձևատրին,
իմ կարծիքով, պետք է հիշվի, որ ձեռագրի հետ բաղդատել ենք երկուսս, խմբագրել եմ ես.
խսկ առաջաբանում ես պետք է հիշեմ Քո ուսումնասիրությունը, որ ինձ այնքան օգտակար է
եղել և որի հիման վրա հարկ չեղավ Բ. ձեռագրի հետ բաղդատելը ես:

Նյութական վարձատրությունը ես այսպես եմ հասկանում. բաղյատուրյան վարձատրու-
թյունը պետք է որոշվի մի ձեռագրի և երեք տպագրի. այս վարձատրությունից ինչպիսի մաս
որ կամենաս՝ ես համաձայն եմ, առանց առարկություն: Եթե ձանաչվի, որ Բ. ձեռագիրն էլ բաղ-
դատված է, և, հետևաբար, այս բաղդատության համար էլ վարձատրություն չլանակվի՝ դա ամ-

րողը պահել քննության համար, և ես մաս չեմ ունենա նրա մեջ: Այս հարցը որոշել, իհարկե, դու լիս կարող: Կմենա որոշել ինձ և հայր Գարեգինին: Եթե չես շտապում՝ այս որոշումը թող մնա՝ մինչև ինձ առիթ լինի էջմիածին գալ, և այդտեղ հ. Գարեգինի հետ, Բո ներկայությունս, կորոշենք:

Աղաթանգեղոսի ձևագիրը զրկելիս՝ հայտնիր, երբ կամենում ես՝ ավանսով. ի հաշիվ վարձատրության ուղարկեմ հրեր-չորս հարյուր ոսկի: մնացածը գործի տպագրությունը վերջանալուց հետո կհաշվենք և կվճարեմ:

Հատուկ բարեւ ընդունի, բարեմաղթելով, որ ավելի հաջողությամբ առաջ գնա աշխատանքները: հաջողությամբ սկսված գործը:

Քո Սո. Մալխասյանց

<Հ. Գ.> Եթե Ղազարի տպագրության մեջ որեւէ վրիպակ գտնեք՝ հաղորդիր, որ գրքի վերջը գնեցիք: Ես նկատել եմ մի «և» պակաս ըստ Ձ. և Ա. տ.: Տպված է առանց «և»-ի ըստ ԲԿԿ. տպելիք ՁԱՍ. ունեն այդ «և»-ը:

Պ. Մանանդյանին ասա՛, որ քո «Հայկականից» մի քանի օրինակ գտնի ու զրկե՛ իմ իրան տված օրինակիս փոխարեն: Ձեռագրի նկարագրությունը նրա մեջ է, և հարկավոր է: Եթե չընտանվի՝ գոնե հայտնիր, թե «Արարատի» ո՞ր տարվա ո՞ր թվի մեջ է տպված հոգվածդ այդ մասին:

1 Ստեփան Կանայան (1860—1936) — բանասեր, պատմաբան, մանկավարժ: 1891—93 և 1896—1914 թթ. էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասավանդել է հայոց պատմություն և գեղեցիկություն:

2 Խոսքը տպարանատեր Մնացական Մարտիրոսյանի մասին է. նրա տպարանում են տպագրվել «Պատմագիրը հայոց» մատենաշարի գրքերը:

3 «Հայկականից» «Արարատում» շարունակաբար տպագրվել է 1894 (№ 1, էջ 22—26, № 2, էջ 55—59, № 3, էջ 89—94, № 4, էջ 128—130, № 5, էջ 154—158, № 6, էջ 187—190), 1899 (№ 7, էջ 299—302, № 8, էջ 354—357, № 10—11, էջ 451—453) և 1900 (№ 1, էջ 28—32, № 3, էջ 134—140, № 5, էջ 254—263) թվականների համարներում:

6

11 մարտի, 1964

Թիֆլիս

Սիրելի Գալուստ.

Երեկ Կանայանի աշտերնատիվին պատասխանեցի աշտերնատիվով: Պատասխանը երեւի կուղարկեք: Մինչև այդ՝ մի քանի բաներ եմ ուզում հարցնել քեզանից, որոնք բնագիրը սրբագրելիս արդեն պատահեցին:

1. Շատ տեղեր բնագրում պատահում են «ետեր» (այսպես են ուղղված), իսկ եր. 46 տ. 23—4 մնացել է «ետիր»: Խոզնեղ, թե՛ փոխել և:

2. Շատ տեղերում թողնված է արդևօք. իսկ մի տեղում (եր. 46 տ. 24) ուղղել ես արդևօք: Ո՞րը ընդունել:

3. Շատ տեղերում կան ևթն, ևն, իսկ գրել ես արդևք (եր. 46 տ. 24): Ո՞ր ուղղագրությունը պահել (Այսինքն՝ ևթն, արդևօք, թե ևթն, արդևք, թե ևթն, արդևք: Ես կընտրեմ առաջինը, ճարահատյալից՝ երկրորդը. իսկ երրորդը չէի ընդունի):

4. Շատ անգամ համեմատություն համար ցույց ես տվել Ս. Գրքից հատվածներ, որոնք բնագրում ոչ թե իրեն վկայություն են բերված, այլ որոնց խոսքերով խոսողը արտահայտում է յուր միտքը (օր. եր. 19, 24-րդ տողի հավելվածում, 62 եր., տ. 3 ևն), իսկ ուրիշ տեղերում կա՛մ չես նկատել, կա՛մ գանց ես արել. օր. եր. 54, տ. 12, 15, 16 (սաղմոսից) ևն. այս և այսպիսի տեղերում, երբ նկատեմ, լրացնե՛մ, թե թողնեմ առանց ձեռք տալու:

5. Գրել էիր, որ շարվի ԴՆ (և ոչ քոչ): Այսպես էլ ուղղում եմ: Սակայն ավելորդ չեմ համարում հիշեցնել, որ «քո» և «քոչ» դանդաղանքում են քերականորեն. առաջինը ուղղականի և հայցականի համար, երկրորդը՝ սեռականի. այսպես՝ անուն, գանուն քո (համտել անուն, գանուն իմ), և անվան քոչ (համտել անվան իմոյ): Քոչ սղված ձև է սկզբնական քոչուի, ինչպես քոչում՝ սկզբնական քոչումի: Եթե համաձայն ես այս դիտողությանս՝ այսպես կտանեմ ուղղագրությունը (քանի որ իմ ձեռքիս է), եթե ոչ՝ կթողնեմ ասածիդ պես:

Այս կետերին խնդրեմ պատասխանես:

Սուբիաս սրբազանի ուղարկած գումարից 1000 ռուբլի մուրհակով պարտք տվի Մն. Մարտիրոսյանին, ինչպես խոստացել էի. նա կվճարե 6%, այնինչ բանկումը տալիս էն 3 և 4%: Պարտք տվի 7 ամիս ժամանակով, այն հաշվով, որ մեզ հարկավոր լինելու դեպքում պատրաստ լինի: Նա ի նկատ առա, և ունեմ, քո՝ նամակիդ (որը ուշ ստացա) տրամադրությունը այս մասին. այսինքն՝ պատասխանատվությունը, եթե այս գումարին որեւէ վտանգ հասնե, իմ վրաս եմ վերցնում:

Հարցրել էի փողի մասին, թե՛ Ղ. Փարպեցու աշխատակցությանդ (բանակը ազատորեն որոշելով) և թե՛ ի հաշիվ Ազաթ<անգեղոս>ի, բայց ոչինչ չես պատասխանել: Չմոռանաս խրնդրեմ այս մասին էլ ղրել:

Երեկվա նամակումս, թուղթը լցված լինելով, չգրեցի, ներկա նամակովս լրացնում եմ, որ ես ոչինչ հակառակ չունեմ Ազաթ<անգեղոս>ի սրբազրույթյան թերթերը քեզ ուղարկելու: Այս՝ սկզբունքով. իսկ գործնականին գալով՝ կարող է երբեմն պատահել, որ տառերը արդեն բոլորը չարված լինեն և ուղարկելը մի քանի օրով տպագրությունը հետաձգելով՝ գրաշարները պարտա մնան. այսպիսի դեպքերում պետք է բացառություն անել և չուղարկել, գործը արագացնելու նպատակով: Բացի սրանից՝ սրբազրույթյունը, եթե ուղարկեմ, ոչ թե վերջինը կլինի, այլ վերջինները, ուստի դուք մամենին կարիք չեք ունենա ուղադրություն դարձնելու տառախալգրի և այլ պակասությունների վրա. այլ լուկ հսկելու իմ վրա, չլինի՞ թե ձեր որոշումների հակառակ որեւէ բան մտցրած կամ թողած լինեմ դիտմամբ կամ անուշադրությամբ. զլխավորապես ծանոթությունների մեջ, այն տեղերում, որտեղ հավելումներ կամ հապավումներ եմ արել (սթն համաձայնեք իմ պայմաններին), ուղադիր լինեք, չլինի՞ թե այլալված լինեն դրանցով ձեր ընդունած ուղղությունը կամ չրությունը:

Ազաթ<անգեղոս>ի ծանոթությունների մեջ ձեր ընդունած՝ ձեռագիրների անվանակոչությունը (ի միջի այլոց՝ A, B, C, D... ա, բ, գ, զ) կարող է աղդարացի տրտունջ հարուցանել տպարանատիրոջ կողմից, որովհետև 2 նոր կասսա պետք է ձեռքի տակ ունենան գրաշարները, որ ղեկարացնում է գործը: Արդեն իսկ նա վնաս է անում: Երեկ հարկավոր կլինի վարձին վրա մի բան ավելացնել: Խնդրում եմ կարծիքդ: Ի՞նչ վնաս ունի, եթե «Տպագիրը» նշանակենք հայերեն S՝ով, ինչպես է և Ղ. Փարպեցու մեջ, փոխանակ լատինական Մի: Ես նույնպես ուրախությամբ լատինական A, B, C, D՝ն կփոխարինեի հայերեն նոտր հասարակ տառերով (ա, բ, գ, զ), իսկ հունարենները թվանշաններով (1, 2, 3, 4) ևն: Քեզ և մուս բարեկամներին բարև:

Քն Ստ. Մալխասյանց

Հ. Գ. էջմիածնի օրացույցի մեջ՝ գրերի գլուտի հոբելյանը նշանակված է հունիսին: Այդտեղ անելու՞ եք մի բան: Այստեղ ուզում ենք մի մասնաժողով կազմել և դրանով զբաղվել: Կանայանին, երբ գալու լինի՝ հրահանգներ տվեք, որ համերաշխ գործ կատարենք:

14 ապրիլի, 1901

Թիֆլիս

Սիրելի Գալուստ,

Ստացել եմ նամակներդ: Յուրջ տված փոփոխություններդ՝ բնագրի և ընթերցվածքների մեջ՝ կկատարեմ: Սակայն քեզ հետ համաձայն չեմ, որ միշտ տպվի «Մովսեսի». ավելի կանոնավոր ձևն է «Մովսիսի» (համեմատիր՝ սիրելի, տիրելի, մովսիսական ևն). «Ե»-ն «ի»-ի է փոխվում գրելաբանական՝ «ել» վերջացած բառերի մեջ, «լ»-ի պատճառով (Իսրայելի, Դանիելի ևն), ինչպես և Կյուրդի, Բարսիլ ևն ձևերում, որտեղ, ինչպես և Իսրայելի ձևում՝ «Ե»-ը առաջ է եկել նախնական «ի»-ից: Բայց՝ ինչպես կամենաս:

Սարտի 21-ին Քեզ ուղարկեցի Ղ. Փարպեցու վերնագիրը և առաջաբանի սկիզբը, որպեսզի նկատողություններդ հաղորդես ինձ: Ահա 25 օր է ոչ նկատողություններդ ստացա և ոչ որեւէ տեղեկություն, իսկ գործը կանգ է առել այդ պատճառով: Եթե ժամանակին հասցրած լինեիր՝ դեռ մի շարաք առաջ Ղ. Փարպեցին բոլորովին վերջացած կլիներ. այնինչ այժմ դեռ առաջաբանը չէ տպված և կիսատ մնացել է: Եթե մինչև նամակս ստանալդ դեռ չես ուղարկել՝ աչքի առաջ ունեցիր, խնդրում եմ, այն վեճը, որ տեղի ունեցավ իմ և Գարեգին վարդապետի մեջ Կանայանի ներքին «Հանդես», № 2

կայությունը՝ «հրատարակություն սրբոց էջմիաշնի» բառերի նկատմամբ, Հիշում եմ, անշուշտ, որքա՛ն ղեկավարված էր եւ համաձայնեցի այս բառերը տպել զրբի վրա, այն ղեկավարված միայն՝ եթե վերահսկողը կամ յուր կամ էջմիածնի անունից դոնե 100 ու միլիոն հրատարակության օգտին: Այս խոստմանս վրա կամ այժմ էլ, իրող՝ Գարեգին վարդապետը պահանջում է, որ այդ բառերը զրկեն ամեն մի հեղինակի վերնագրում: այնինչ ես վայելուչ եմ գտնում ղեկավարված միայն հատորների վերնագրում: Իսկ ենթադրում եմ, բացի այդ վերնագրից, որ Քեզ ուղարկեցի եւ որը պետք է ունենա ամեն մի հեղինակ՝ ղեկ եւ առանձին վերնագիր հատորների համար, հատուկ զարգարան զրբերով, կարմիր թանաքով, որի մեջ մի առ մի կնշանակվեն հատորի աշխատակիցների անունները: Եւ իմը՝ իրեւ խմբագիր: ահա, այս մեծ վերնագրում ես ենթադրում եմ ղեկ վերնագրում, պատշաճ կերպով, կղեկավարվի եւ սրբազան Սուրբիաս արքեպիսկոպոսի անունը՝ իրեւ հատորի հրատարակության բարեբարի: Գրողի վարդապետի պահանջը, որը բխում է նրա ծայրահեղ էջմիածնամտությունից՝ ոչ միայն անհաշակ է եւ, գոնե իմ մեջ, զգված է հարուցանում ղեկի այդպիսի արհեստական պրոպագանդան հօգուտ էջմիածնի, այլեւ պետք է պարտավորեցնեմ, ամեն մի հեղինակի վերնագրում, հիշել եւ՝ Սուրբիաս սրբազանի անունը, եւ՝ հատորի բոլոր աշխատակիցներին, եւ՝ իմը, որ շատ է շատ անհամար է. կարող ենք այժմեւ, օր. Ղ. Փարպեցու վրա, տպել իրեւ աշխատակից Ռեզյանի, Սեթ Հարությունյանի՝ եւ անունները, քանի որ ներսից աշխատանքը ղեկ շուններ մեր ձեռքում, ուրեմն եւ կարող է որեւէ դիպվածով մեր ձեռքը չըհասնել: Խնդրում եմ Քեզանից, Գալուստ, ի սեռ գործի, ի նկատ առ իմ դրությունը եւ աղդիր Գալուստի վարդապետի վրա այն մտքով, որ ինձ շատիկ անիծել այն օրը, երբ այս գործի գաղափարն իրագործելու ձեռնարկեցի, կամ ձեռնթափ չլինել: Մեծամեծ դժվարությունների հաղթեցինք՝ մինչեւ գործը ճանաչար: ինկավ. հիմա, իզուր տեղը, առաջ է բերում այնպիսի դժվարություն, որին հաղթելու համար հարկավոր է ծանր զոհ՝ դավանանքի, գիտակցության զոհ...»

Այժմ նոր տարիներ երեկ տպագրվեցին. շատ սիրուն են. մոտ օրերս նմուշ կուղարկեմ: Այսօրվանից կսկսեն շարել ծանոթությունները: Սրանց տողատուքները բավական ժամանակ պետք է խլի ինձանից, որովհետեւ դուք տողատուք եք ձեր բնագրի համաձայն, որ մեր տպագրության համար չունի նշանակություն:

Սրա հետ ուղարկում եմ քեզ ապահովագիր՝ հրատարակության սեփականություն կազմող եւ իմ ձեռքում գտնվող գումարների մասին: Երբ ստանաս՝ ինձ տեղեկություն տուր եւ Գարեգին վարդապետին հայտնի: Եթե ձեռն չեք հավանի՝ գրեցեք, այնպես կգրեմ՝ ինչպես ցանկանում եք հուսով: Ազատե՛ք ձեռքերս> ի շարունակություն<ը> պիտի ուղև: AVIS.

Բարեւ բոլորիդ:

Քո Առ. Մալխասյանց

1 Սեթ Հարությունյան (1862—1936)—բանասեր, մանկավարժ. Մ. Արեղյանի հետ 1913 թ. հրատարակել է Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցի» քննական տեքստը:

2 Բազմակետը բնագրինն է:

Սիրելի Գալուստ,

Ստացա նամակդ, որով հաղորդում եմ, թե ծաղած տարածություններ վերջանալու վրա է: Իհարկե, շատ ուրախ եմ այսպիսի վախճանին, որ խոստանում է սկսված գործին հաջողություն, ուսանց նոր կազմակերպության ներդրությունների: Կանայանի անունը հիշելը առաջաբանում, իրեւ Գարեգին> վարդապետին հավասար ձայն ստացողի եւ հօգուտ սորան հրաժարվողի՝ իմ կողմից դժվարության չի հանդիպի: Բացի այս դիտումից, որ դա այնպիսի մանրամասնություն է, որպիսին տեղ չպիտի ունենա այնտեղ: Համենայն դեպս ես հակառակ չեմ այդ բանին, եթե դուրանով մի եռանդուն աշխատավորի սիրտը պիտի շինվի: Իսկ նորան վերաբերյալ երկրորդ կետի մասին չեմ կարող խոսք տալ. դա կախված կլինի այն բանից, թե ո՞ւմ կարող է նա հաջողվել: Եթե ինձ՝ ուրեմն ձեր երկուսիդ գործը կլինի, եթե քեզ՝ չեմ համաձայնի, եթե Գարեգին> վարդապետին՝ կհամաձայնեմ: Կարծեմ առանց մեկնության կհասկանաս:

Դամ հիմա մեր գործին. Ղ. Փարպեցին բոլորովին վերջացել է և գրաքննության է ուղարկվում այսօր: Մակագրությունը այնպես է՝ ինչպես պայմանավորվել էինք. միայն գլխավոր երեսի վրա դրի «Պատմագիրք Հայոց ի լոյս ածելու րազդատութեամբ ձեռագրաց ի ձեռն բանասիրաց հայոց»: Առանց լայն չէր լինի. «հրատարակել», «տպագրել» չէին հարմարում: Ինչպես և իցե՝ այդ րաոը, կարծում եմ, իմ անձի դեմ կասկածներ հարուցանելու տեղիք պիտի չտա: Այս երկու օրս Քո անունով կուղարկեմ 30 օրինակ, որոնցից 10 Քեզ սեփականություն՝ ինչպես աշխատողի (նույնքան օրինակ կվերցնեմ և ես), իսկ 20-ը թողնում եմ Քո և Գարեգին՝ վարդապետի տրամադրությամբ տակ, ինչպես հրատարակիչ-անդամների, որ ընծա ուղարկեք երեքիս կողմից ո՛ւմ որ հարմար դատեք, կամ ծախեք: Ես ոչ ոքի իբրև հրատարակիչ-ընկեր ոչ մի օրինակ չեմ ուղարկի, և ոչ իսկ Սուրբաս սրբազանին. այլ իմ կողմից, իբրև աշխատող, կուղարկեմ հ. Տաշ-յանին, Պրեզիդենտին¹, Մեյնին, Մառին (երկուսիս կողմից, ինչպես գրել էիր), Քալանթարին², Լեսին և Արիստակեսին՝ եպիսկոպոսին: Մի հատ էլ. խնդրում եմ, երկուսիս կողմից այդտեղ տաս պ. Մանանդյանին: Ուրեմն ոչ մի խմբագրության ես չեմ ուղարկի. Դուք արեք. Լս համա-ձայն եմ Ձեզ հետ: Այսպես վարվելուս պատճառն այն է, որ մի շաբաթից գնալու եմ ամառանոց (հետաձգել անկարելի է). արդ չեմ հասնի ցուցակ ուղարկել քեզ, պատասխան ստանալ և ըստ այնմ գրքերը ձանապարհել: Շատ ցավում եմ, որ հանգամանքներն այնպես բարդվեցին, որ «превышение власти» հանցանքում չդատապարտվելու համար զգուշանում եմ նույնիսկ տար-րական պարտականություններ կատարելուց. այս խոսքս Քո հասցեին չէ ուղղված: Համենայն դեպս խնդրում եմ շնորհակալություն, թիպետե ես նորան թերթ-թերթ ուղարկեմ: Եմ ամբողջ գիրքը, ինչպես և նորայրին³:

Աղաթանդակդուսի տպագրության գործը ձգձգվեց. երեակայիր, ծանոթությունների լատինական կուրսիվ տալու րավականաշափ շունենալու պատճառով ահա մի ամսից ավելի քաշքշվում է գործը: Քանիցս հիշեցրել եմ. «հա՛, այսօր կպատվիրեմ». «հա՛, վաղը կբերեն»: Վերջն էլ, թե յուր ունեցած տառերը Պետերբուրգից են, իսկ այստեղ, Մատերի մոտ պատվիրածը, թեև նկարով նույնն է, բայց շարելու չի հարմարի՝ տեխնիկական անհարմարություն կա. խոստացավ Պետերբուրգից բերել տալ: Ես ասացի, որ ավելի լավ է՝ յուր ունեցածը պահեմ. և մեզ համար պետ-րական նյութը ամբողջապես Մատերից վերցնեմ: Շատ ուրախացավ այս առաջարկության և խոս-տացավ կատարել, բայց դեռ չէ կատարել: Այնպես, որ Ազաթանգեղոսի տպագրությունը կմնա սեպտեմբերին. 272 Երես շարված բնագիր և մոտ 30 հրեսի ծանոթություն (առանց կուրսիվները դնելու) պատկած կմնան մոտ 3 ամիս: Մեր գործին էլ վնաս, տպարանին էլ, բայց ուրիշ ճար չկա: Ասենք շատ էլ չեմ փոստում, որովհետև երևում է, որ Դուք ծանոթությունները չեք հա-ցրեցնելու. ուրեմն շատ-շատ սկստր է տպելիք միայն այն՝ ինչ որ ձեռքիս նյութ կա, որ մի ամիս էլ չի տեխ, երբ երկու հոգով աշխատեն: Մոտս եղած ծանոթությունները հետո կտանեմ ամառանոց և կամաց կամաց կնայեմ, ու սեպտեմբերին Քեզանից կհարցնեմ նկատողություններս մասին:

Բոլորիդ բարև:

Քն Ստ. Մալխասյանց

¹ Նկատի ունի մշակութային գործիչ, 1898—1911 թթ. Վիեննայի Մխիթարյան մատենադա-րանապետ Բախնարաս Պրեզիդենտին:

² Ալեքսանդր Քալանթար (1835—1913) — «Մշակ» թերթի խմբագիր (1893—1913), գիտ-նական-գյուղատնտես:

³ Նկատի ունի նորայր Բյուզանդացուն:

Սիրելի Գալուստ,

Արդևն վերադարձել եմ Թիֆլիս և դարձեցի բազմազբաղ շրջանը վերջացնելու մոտ եմ. երեկ ու շաբաթից դարձական սովորական կյանքը կսկսվի, և ես նորից կխորատուղվեմ Ազաթանգեղոսի սրբագրության մեջ: Ցավելով պետք է հայտնեմ, որ ամառս ոչնչից ոչինչ չկարողացա անել ծա-նոթությունները կարդալու նկատմամբ, թեպետ բոլոր նյութը հետո տարել էի: Ասենք, ամեն տարի նույն բանն է պատահում ինձ. գրական աշխատանքի մեծ հույսով գնում եմ ամառանոց, և վերադառնում եմ՝ ոչինչ չարած: Հիմա կաշխատեմ հասցնել:

Քեզանից ոչ մի տեղեկություն չունեմ. ծանոթությունների շարունակությունը ե՞րբ ես ուղարկելու եմ ի՞նչ դրություն մեջ է թե՛ այդ դործը և թե՛ ապագա գործերը: Կանայանը հանդիպել էր զուրոց ինձ տեսնելու՝ կարճ միջոցով. ևս այդ ժամանակ մանկավարժական ժողով ունեի: չէի կարող դուրս գալ. այնպես որ չկարողացա նրան տեսնել: Գարեգին վարդապետն էլ չերեաց, ուստի ոչ մի տեղեկություն չունեմ Պատմագրոյի դրության մասին այդտեղ:

Հուլիս ունեմ, որ վաղուց ստացել ես Ղ. Փարպեցու 30 օրինակը, բայց չգիտեմ, ուղարկելու ես արդյոք խմբագրություններին և հատկապես Սուրբաս սրբադանին, ինչպես հանձնարարել էի Քեզ: Գոնե գիտեմ, որ «Մշակը» դեռ չէ ստացել այդ գրքից: Եթե արդեն ուղարկել ես՝ ինձ գրիւր ինքդում, ինչ որ, սրբապետի եթե ուրիշ ուղարկելիք տեղ կամ անձ կա՝ ես ուղարկեմ իմ հաշիվով (այսինքն՝ զնեւում):

Վերջապես սպասում եմ Քեզանից երկտողի, գործի նոր սեղոնի ղլխին: Հուլիս ունեմ, որ սուտղությունը լավ կլինի: Բարեւ հիշիր Միխիթար վարդապետին և մյուս բարեկամներին: Կինս և ես բարեւում ենք Քեզ:

Քո Ստ. Մալխասյանց

Ն. Ստ. Մալխասյանցը երկար տարիներ հայոց լեզու և գրականություն է դասավանդել Թիֆլիսի ներսիսյան դպրոցում:

10

17 հոկտեմբերի, 1921

Թիֆլիս

Սիրելի Գալուստ,

Ուղարկում եմ Սեպեթ<անգեղոսի> առաջին թերթը տպված՝ երեք օրինակ, հետո զնեւում նույն թերթի այն խորձը, որ ուղարկել էի Քո նկատողություններին և նույն թերթի վերջինթերթը՝ սրբագրությունները՝ նկատողություններդ ստանալուցս հետո, համեմատության համար: Ուղարկում եմ և երկրորդ թերթը՝ կապված. մեջք կան դեռ սխալներ. նրանք կուղղվեն, որովհետև դեռ երկու սրբագրություն պետք է կրեն*: Սպասում եմ այս երկրորդ թերթին վերաբերյալ երրորդ շարք հարցումներիս պատասխանին (առաջին երկուսի պատասխաններն ստացել եմ), որպեսզի հարկավոր փոփոխություններն անեմ և տպեմ: Սպասում եմ 2-րդ թերթի տպվելուն, որպեսզի 2 թերթ միասին ուղարկեմ Սուրբաս սրբադանին և Մառին: Վիեննա ուղարկել չեղավ: Բայց Ղ. Փարպեցի ուղարկեցի «Հանդես»:

Ուղարկում եմ հարցումների երկու թուղթ (ներողություն, որ կտոր բրդուն թղթերի վրա եմ գրում. պարսպելու ժամանակ ձեռքիս տակ ընկած որևէ թղթի կտորի վրա գրում եմ, և հետո ձանձրանում եմ արտագրել): Մի կտորը վերաբերում է երրորդ թերթին, որ արդեն կապել եմ (չգարմանս, որ ասում եմ՝ կապել եմ. բնագիր և ծանոթություն որոշ քանակությամբ երեսի մեջ գետեղել և թվանշաններ դնելը ոչ մի գրաշարի գործ չէ, և յուրաքանչյուր թերթի այսպես երես կապել ինձանից խլում է 6—7 ժամ միապաղաղ աշխատանք): Շտապիր սրանց պատասխանը շուտ ուղարկել: Երեք օրից երեք կուղարկեմ նույն թերթին վերաբերյալ էլի որիշ հարցեր, երբ երես կապված թերթը, բնագիր և ծանոթություններ> համեմատելով՝ նորից կկարդամ, որի ժամանակ ավելի աչքի են ընկնում կասկածելի կետերը: Երկրորդ կտորը հարցումների այնքան շտապողական չէ: Հարցումներս, ինչպես տեսնում ես, շատ անգամ զուտ բանասիրական բնավորություն են կրում և վերաբերում են բնագրի մեջ այս կամ մյուս բնթերցվածքը ընտրելուն: Ես այս հարցերը տալիս աչքի առաջ ունեմ մեր անկեղծությունը և ընդհանուր ցանկությունը՝ ըստ կարելիության աշխատանքը կատարյալ անել: Եթե Գարեգին> վարդապետը պիտի ուշանա՝ գրիւր, ի հաշիվ որևէ գումար ուղարկեմ: Բարեւ բոլորիդ:

Քո Ստ. Մալխասյանց

* Կարիք չկա այս երկրորդ թերթի սրբագրությունը վերադարձնել, ուղարկել եմ լույսի տեսություն, և ոչ առաջին թերթի սրբագրությունները:

18/21 մարտի, 1906,
Թիֆլիս

Սիրելի Գալուստ,

Նստացա բաց նամակդ: Տպարանում շատ գործ ունենալով՝ չեն աշխատում Ազաթանգեղոսի վրա, բայց ես, թեպետ գրավոր պայմանով իրավունք ունիմ չեմ ստիպում, որովհետեւ ինքս էլ միջոց չունիմ աշխատելու: Ծառավորության 81/4 ժամից մինչև ժամի 3-ը (երբեմն ավելի ուշ) զբոսայգիում գործով եմ զբաղված: Երեկոներին սկսած 6 ժամից մինչև 10 (երբեմն ավելի ուշ) զբաղված եմ ժողովներով, որոնցից 5-ը շաբաթական պարտավորական են, կիրակի առավոտներն էլ նույնպես զբաղված ես զպրոցում: Օրական հազիվ ժամանակ եմ գտնում երկու լրագիր կարդալու: Ահա դրուժնային ամիսներից ի վեր:

Ի՞նչ զպրոցական ծրագիրների համար էջմիածնում համագումար ժողով հրավիրելը իրականանա՞լ հավանորեն ինձ էլ կվիճակվի գալ: Եւ ժամանակ գուցե կարողանանք լուծել ծագած՝ ինձ համար մինչև այժմ մութ թյուրիմացությունը:

Ներսիսյան զպրոցն էլ, որ մինչև այժմ կույս էր մնացել աչքի ընկնող անկարգություններից՝ դժբախտաբար վարակվելով ուրիշների օրինակով: Ամսիս 16-ին գործադուլ հրատարակեցին հաջորդ օրվա համար Գ-Ձ դասարանները, պահանջելով, որ բավարարություն տրվի իրանց երկու ցանկություն: Երկու ցանկությունը միասին գումարած՝ մի կոտրած ձվի երկու դարդակ կճեպ շարժեն, բայց բնորոշ են իրանց տարօրինակությամբ և այն միջոցով (գործադուլ են), որով ուլում են հասնել իրանց ցանկության: «L'état -c'est nous!»: Եւ կերպով կարելի է ընդունել աշակերտական շարժման հոգևորանությունը:

Բարեւս խնդրեմ հաղորդես Մխիթար վարդապետին և պ. Սիրակյանին: Վերջինիս ուղարկել էի մեր մասնաժողովի արձանագրությունները՝ լատ նոցա կանոնադրության հոդվածները խմբագրելու համար: Զունենք տեղեկություն, որքա՞ն առաջ է տարել գործը և ե՞րբ հույս ունի վերհացնել: Եթե կարելի է՝ երկտողով տեղեկություն տա:

Քն Ստ. Մալխասյանց

12 հունիսի, 1907
Թիֆլիս

Սիրելի Գալուստ,

Երեկ ստացա նամակ-պատասխանդ 29-րդ թերթի համար: Երեկոյին «առանց շտապելու, ուղարկությամբ» կարդացի թերթը նորից (մի անգամ էլ դեռ կկարդամ Ախալցխայում) և կընտրվի: Այս առիթով ասեմ, որ «մյուս հոյնը» (առանց հիշելու Die Acten են)՝ բառացի Քո պրածն է. այնպես որ անհաջող կրճատման մեջ ես մեղավոր չեմ:

Երեկ ամբողջ Ազաթանգեղոսը նորից նայեցի և ստուգեցի բոլոր ցուցումները այս կամ այն երեսի և հ-ի վրա: Բոլորը հիշտ դուրս եկան՝ բացի երեք դեպքից.—եր. 315, ծան. 82 § 839 ուղղելի՝ § 845. եր. 330, ծան. 92, § 658. ուղղելի § 656. եր. 84, ծան. 44 «տես եր. 95, տ. 5». զո՞ղն ուղղելի եր. 95, տ. 1: Կա նաև մի ցուցում (եր. 128, ծան. 61, շարունակություն) «և յուր ծայրաբաժը հասցնում է մինչև սարը. 789»: Որովհետեւ այս պարբերության բովանդակությունը հայտնի չէ, ուստի չեմ կարող ստուգել, որքա՞ն հիշտ է ցուցումը:

30-րդ թերթում Քո նշանակած թվահամարների փոփոխություն չարի (այնպես որ հասնում է մինչև § 900), որովհետեւ վերահիշյալ ստուգության ժամանակ տեսա, որ այս վերջի երեսներին վրա առաջ (արդեն տպված մասերում) ցուցումներ չկան, այլ կան 29-րդ, դեռ չտպված թերթում, որոնք և ուղղեցի ըստ բաժանման:

«Հավատամքը» վերաբերմամբ չեմ կարող հաստատ բան ասել, որովհետեւ առիթ չեմ ունեցել կարդալու, բայց Քո խոսքից դատելով՝ դա բաղվածք է Ազաթանգեղոսի վարդապետությանից, որ համեմատյալ դեպս Ազաթանգեղոսի խմբագրի կազմածը չէ. այնինչ մենք տրպագրում ենք Ազաթանգեղոս: «Հավատամքը» կարող է Ազաթանգեղոսի նկատմամբ բնադրաբնական նշանակություն ունենալ, որպիսին կունենան և բաղվածքի համառոտություններ Ազաթանգեղոսից բոլոր մեր հին հեղինակների մոտ, սկսած Փավստոսից, Խորենացուց մինչև Ուխտանես և ավելի հետո: Ուրեմն դրա՞նք էլ պետք է տպվեն: Շատ լավ կլինեն,

բայց մեր հրատարակության սկզբնական նպատակից արդեն չափազանց կշեղվեինք: Ես դիտեմ, որ այս տեսակետը քննելու համար, բայց էլի պարտք համարեցի հատնել:

Այսպես կամ այնպես՝ հնարավոր չի լինել սեպտեմբերի վերջացնել Ազատության ղեկավար, և աշնանից դարձյալ նրանով պետք է դբաղվենք, փոխանակ նոր բան սկսելու:

Այսօր ընտանիքով գնում եմ Ախալցխա. նամակ գրելիս՝ ի նկատի ունեցիր այս:

Քո Ատ. Մախասյանց

Հ. Գ. 30-րդ կես թերթը արդեն ուղարկել եմ նկատողություններով և Կանադանի հայաստաբուրժուական պատճենով. հույս ունիմ ստացած կլինես:

Ատ. Մ.

13

4 սեպտեմբերի, 1907

Թիֆլիս

Սիրելի Գալուստ,

Ես արդեն վերադարձել եմ Թիֆլիս. ժամանակ է վերսկսելու և վերջացնելու Ազատության ղեկավարի առաջարկը և ցանկերը: Վերջի (29-րդ) թերթի սրբագրությունը Քեզ ուղարկել եմ. չգիտեմ վերադարձվե՞լ ես, թե ոչ* Կիսատ է մնում 30-րդ թերթը. ուղարկիր «Հավատարմություն», թերթը լրացնելու համար: Առհասարակ՝ շտապենք ու վերջացնենք այս գործը:

Հաջորդի մասին ոչինչ չգիտեմ: Հայր Գարեգինը խոստացել էր Եղիշեն հասցնել, որպեսզի ամառս կարգայի ու ծանոթանայի՝ շահագրգռելու խորհրդացու մասին խոսք կար՝ նա էլ քննելու: Արդյո՞ք պատրաստ է Քո Կորյունը (Փափստոսի մասին չեմ էլ հարցնում):

Ուրեմն խնդրում եմ, ուղարկելիքդ նյութերի հետ, նաև կարծիքդ հայտնես մեր անելիքի մասին՝ Ազատության ղեկավարի հետ:

Ընդունի՛ր բարևս: Զգիտեմ, եղբայրդ ալդտե՞ղ է, թե արդեն գնացել է պատվավոր արտորանների, թե ոչ: Եթե այդտեղ է՝ նորան էլ բարև:

Քո Ատ. Մախասյանց

14

<Անթվակիր,

Թիֆլիս>

Սիրելի Գալուստ,

Վաղուց ուզում եմ Քեզ նամակ գրել, բայց ուղղակի ժամանակ չէ լինում: «Քո» (կամ «ձեր») Ազատության ղեկավար հոգիս հանում է. մի թերթը (16 երես) մինչև որ տպագրվի՝ ինձանից կառնեմ ավելի քան 30 ժամվա աշխատանք, և ինչպիսի՞ ուղղությամբ, լարված աշխատանք, մանավանդ երկրորդ սրբագրությունը, որի ժամանակ գրում եմ նկատողություններս:

Սրա հետ ուղարկում եմ 12 (2 թերթի) նկատողություններս: Թերթը, երկրորդ սրբագրությունը, պատրաստ կլինի 2—3 օր հետո, որից մի օրինակ Քեզ կուղարկեմ գիտողությունների համար, ինչպես արել եմ և Դ և Ե թերթերի համար էլ ըստ Քո յանկությունների: Բայց այս սրբագրությունը Քեզ ուղարկելուց օգուտ չկա գործի համար, քանի որ իմ նկատողությունների պատասխանն ստանալուս պես՝ անմիջապես ուղղելիքներն ուղղում եմ, մի անգամ էլ մերենայից սրբագրությունը կարող եմ և տպում, և միայն տպագրելուց հետո ես ստանում եմ Քո նկատողությունները, որ անում ես սրբագրությունը կարգալու ժամանակ: Քո գործը հեշտացնելու համար՝ ես ուղարկածս սրբագրությունները համեմատում եմ նախընթաց ուղղագրությունների հետ, և ինչ որ գրաշարը մոռացել կամ սխալ է արել ուղղելիս՝ փոփոխում և նորից եմ սրբագրում: Իմ նկատողություններիս պատասխանը Քեզանից ստանալուց հետո սպասել Քո նկատողությունների (սրբագրության ընթերցանության հիման վրա)՝ չեմ կարող. որովհետև տպարանում տա-

* Նամակս գրելուց հետո գտա, որ վերադարձվել ես և արդեն ուղղված է թերթը ըստ վերջին ցուցումների:

ոները պակասում են և գործը շատ կծղձղվի: Մանր տառեր տպարանն ունի 3 թերթ շարելու շափ (դեռ մի քանի գրեր պակասում են այսքան շարելու համար էլ), և այսքանով պետք է բավականանանք: Ինչպես կարող եմ պահանջել, որ տառերն ավելացնեն, բայց նկատելով, որ Ագաֆանգեղոսը բացառիկ հրատարակություն է՝ այս քանակությամբ մանր տառեր կլանող՝ մեղքանում եմ տպարանատիրոջ, որովհետև Ագաֆանգեղոս>ից հետո այդքան մեծ քանակությամբ և 8 տառ անգործածական պիտի մնա:

Այս հանգամանքը լսելուց հետո՝ ուզում ես՝ շոտլանդեմ սրբագրություններն ուղարկել, ուզում ես՝ դադարեցնեմ:

Ծանոթությունների շարունակությունը շուտ հասցրու:

Ագաֆանգեղոսի խմբագրության գալով՝ ես հիշում եմ երկուսից մի խոսքը, թե ձեզ համար՝ ծանոթությունները նույնչափ կարևոր են՝ որքան և բնագիրը: Բայց ես տեսնում եմ, որ բնագիրն դուր չէր ավել այնքան կարևորություն՝ որքան ծանոթություններին: Թող սրանք լիակատար լինեն, ինչպես և այժմ, բայց բնագիրը պետք էր ավելի մշակել, լավադուր խմբին հետևելով: Դուր տալիս էր ահալին քանակությամբ նյութ, բայց ինքներդ նրանից քիչ եք օգտվում: Այժմ յան հրատարակությունից օգտվելով՝ կարելի է մի նոր՝ հիանալի Ագաֆանգեղոսի բնագիր խմբագրել: Ինչու՞ աչդ բանը հենց դուք էլ չանեիր:

Ուրախ եմ, որ գոհ ես տպագրությունից. այդպես էլ պետք է լինի իմ այսքան աշխատությունից, հետո ինչ վերաբերում է հավատարմության (ծանոթությունների մեջ), կարող եմ սուսել, որ ես, իրեն մարդ, սխալական եմ, բայց ինչ որ կարելի է պահանջել այսպիսի աշխատություն մեջ՝ ամենաուղիղ, բարեխիղճ ու հասկացող աշխատողից՝ այն կգտնես ծանոթությունների մեջ: Երբ մի հավատարիմ եկող լինի՝ հետը կուղարկեմ արդեն տպված մասերի ծանոթությունների բնագիրը, որպեսզի համեմատենք: Մանր-մունր փոփոխություններ շատ կան, բայց բոլորը՝ օգուտ պատմության: Արդեն իմ ուղարկած հարցերից կարող ես մակաբերել, ինչի՞նչ երկյուղածությամբ եմ վերաբերում զեպի ձեր աշխատանքը, նույնիսկ չնչին բաների հասար էլ դիմում անելով. ուրեմն ինչ որ փոփոխել եմ առանց հարցնելու՝ ավելի մանր բաներ են, լոկ խմբագրական ձևի բացահայտության կամ աչքից փախած ակնհայտի սխալներն ուղղելու համար:

Ինչու՞մն են կայանում Կանայանի ավելի մեծ պահանջները՝ չես գրում, բայց շատ հետաքրքրական է:

Փարպեցու վարձատրության հարցը վճռելու մեջ իմ մասնակցությունը անհարմար է, սուկայն եթե այս կամ այն կետի մասին կարծիքս հարցնեմ՝ անկեղծությամբ կպատասխանեմ: Նույնպես խոսեցեք իմ վարձատրության մասին՝ Ագաֆ<անգեղոս>ի աշխատակցության համար:

«Մշակի» այս օրվա բանասիրականը (երեք աստղ) խոսում է Նորայրի մասին և ակնարկում է իմ և նրա մեջ հղած բանակցությունը Պատմագրքի աշխատակցության վերաբերմամբ: Կարելի է ինձանից պատասխանեմ: Բարև բոլորիդ:

Քն Ստ. Մալխասյանց

երկու բաց նամակների միասին ստացա Ախալցխայի Դիպակ կալվածում, որտեղ հողի և կանաչի հետ վախելում ենք և լեռնային անընդհատ անձրևի հրապույրները:

31-րդ թերթը մաքուր տպագրված ուղարկել եմ մի շաբաթ առաջ. հուսամ ստացած կլինես. վերջին կիսատ թերթը այստեղ մի անգամ սրբագրեցի և ուղարկեցի Թիֆլիս, տպարանը, պատվիրելով, որ ուղղելուց հետո քեզ ուղարկեն մի օրինակ: Այս էլ գուցե արդեն ստացած լինես:

Վրիպակներից մի քանիսը արդեն նշանակել եմ. մյուսները ի նկատի կունենամ աշնանը՝ հաջորդ սրբագրության ժամանակ:

Առաջաբանը, գուրադում եմ, մեծ պասի շափ երկար պիտի լինի. աշխատիր, որ պատրաստ լինի, որպեսզի օգոստոսի վերջերին անհապաղ սկսենք ու շուտով վերջացնենք:

Եթե հորենացին սեպտեմբերին չենք կարողանալու սկսել՝ ես մտադիր եմ Սեբեոսը տպագրել՝ մի հեղինակ, որ հակառակ չոր խոշոր արժանիքների, շատ անխնամ և աղավաղված տպա-

գրությունների է արժանացել: Բանի որ ձեռագիր մի հատ կա և բաղդատությունը քիչ ժամանակ կպահանջե՝ ևս օգոստոսի մոտավորապես 20-ին կգամ այդտեղ, մի 5—6 օրում կբաղդատեն մեծ և բաղդատությունը հետո վերցնելով բնագիրը Քիֆլիսում կարճ միջոցում կխմբագրեմ, սեպտեմբերի կեսերին, Աղ՝ <աթանգեղոս> ի առաջաբանը դեռ չվերջացած՝ կարող կլինեմ Սև-բուսից շարվածք հանձնել տպարանին: Յանկալի է իմանալ Քո և Գար <եգին> վարդապետի կարծիքը այս մասին, նաև այն, թե ձեռագիրը պատրաստ է, կամ լիակես կարելի՞ է հուսալ, որ օգոստոսի 20-ական թվականներին մի շաբաթվա շափ ժամանակ այդտեղ իմ տրամադրության տակ կլինի: Այս մասին էլ խնդրում եմ հաստատ տեղեկություն:

Հայցականի մասին հոգվածիցս՝ ղեկավարաբար արտապություն չունեմ: Արեղյանը գոնե ստացած կլինի «Նոր-դպրոց», նրանից կարող ես ստանալ և կարդալ: Առանձին գիտական նո-րություն չկա մեջը:

Ընդունիր բարեկեցություն և մեծ աղջիկս դեռ չեն եկել: սպասում եմ այսօր-վաղը:

Քո Ստ. Մալխասյանց

1 Նկատի ունի «Հայցական հոլովը աշխարհաբարի մեջ» հոգվածը (տե՛ս «Նոր դպրոց», 1908, № 1, էջ 44—51):

16

11 սեպտեմբերի, 1903

Քիֆլիս

Գալուստ,

Ամառս ստացա մի քանի բաց նամակներդ, որոնցից վերջինով հայտնում էիր, թե գնալու ես ամառանոց, որտեղից վերադարձիդ կուղարկես Ագաթ <անգեղոս> ի առաջաբանի պատրաստ մասը և մնացածը կվերջացնես կուղարկես:

Հուլիս ունիմ, որ արդեն դարձած կլինես ամառանոցից, ուստի խնդրում եմ անմիջապես ուղարկես առաջաբանը՝ որքան կա, և մնացածը շտապես պատրաստել և ուղարկել: Վերջին թերթը (ցանկերը, վրիպակները) կտպեմ այն ուղղություններով, որ բաց նամակով գրել էիր: Նույնպես հոգ տար, որ խորենացին, որքան պատրաստ կա՝ օր առաջ ուղարկե Արեղյանը:

Պայմանների մասին մենք լիակատար համաձայնության եկանք նրա հետ՝ երկաթուղու վա-զնում խոսելիս: Բոլորը գրավոր կձևակերպենք, որպեսզի թյուրիմացություն չծագի:

Այս տարի ես դաս շատ քիչ ունիմ, ուստի ուզում եմ ազատ ժամանակ գործ դնել մեր հրատարակության վրա և շատ գործ առաջ տանել: Եթե այս բանը ինձ չպիտի հաջողի՝ նույնը այդտեղ ուշանալով, խնդրեմ ինձ հիմակվանից հայտնես, որպեսզի ուրիշ գործ գտնեմ, կամ գոնե կովկասագիտական կուրսերում շարունակեմ դասախոսություններս (որը մերժեցի առ ժամանակ՝ որպեսզի ավելի ազատ լինեմ հրատարակության համար): Պարապ մնալ ո՛չ բնու-թյունս է թույլ տալիս և ոչ նյութական վիճակս: Ուրեմն սպասում եմ: Ընդունիր ինձանից և փնտրիցս բարեկեցություն: Հուլիս ունեմ, առողջ ես:

Քո Ստ. Մալխասյանց

17

24 դեկտեմբերի, 1903

Քիֆլիս

Գալուստ,

Ուղարկում եմ պ. Ա. Ահարոնյանի ստացագիրը 158 ռուբլիի մասին: Դուն էլ մի անգոր-բագիր ուղարկիր այդ գումարի ստացման՝ իմ հաշվինքիս մեջ պահելու համար:

Առաջաբանի շարունակությունը շատ ուշացրիր: Նյութ՝ գրաշարի ձեռքում էլ չկա (առաջա-բանից): Առաջին թերթը վերջացած է, տպել դեռ չեն կարողացել. երկրորդը Քեզ ուղարկել եմ նախելու: Երրորդը երես կապած՝ ձեռքիս է. երկու-երեք օրից Քեզ կուղարկեմ: մնում է մի քանի էրես առաջաբանից, արդեն շարված: շարունակությունը չկա: Շտապիր:

նորենացու առաջին թերթը երես կապված է. կարդացել, նկատողություններս գրել եմ. հուլյս ունեի, որ երկրորդ սրբագրությունս այսօր ուղղված կստանայի և կուղարկեի պ. Արեղ-յանին, բայց շտապաւ Գործը հերթի ընկել է, թեև քիչ ուշ, որովհետև մի քանի լատինական մանր տառեր տպարանը չուներ. պետք եղավ պատվիրել Մի քիչ էլ ինձ խաբխաբեցին, ուրիշ գործեր հանձնելով մեր գրաշարին (տոններից առաջ շտապովի գործեր): Այժմից կարծեմ ան-ընդհատ կշարունակվի:

Մ. Արեղյանը մի զուլամա պատասխան է գրել իմ հոգվածին. այսօր սկսել եմ կարդալ. նոր եմ հասել կեսը. շափաղանց բարդացրել է պարզ խնդիրը, որի էական կետերում ոչ մի տար-բերություն չկա երկուսիս հայացքների մեջ: Դեռ մինչև վերջը կարդամ:

Այսօր լսվեց, որ գիշերս ձերբակալել են Հովհաննես Թումանյանին՝ եղբորը (թե՞ որդու՝ լավ չեմ հիշում) հետ, հաժակին², նիկ. Մատինյանին. խուզարկել են Թոփչյանի³ բնակարանը. իրան չեն գտել: Սրանից առաջ տեղի ունեցած ձերբակալությունների մասին երևի արդեն լսած կլինես: <1 անընթ. > օրերի ընթա խեղճ ընտանիքներին:

Քն Սո. Մալխասյանց

1 Ստացագրում նշված է, որ Լեոյի հորեւանական հանձնաժողովին հանձնելու համար Սո. Մալխասյանցից ստացել է Գալուստ սարկավազի ուղարկած 158 ո. գումարը (տե՛ս Մատենա-դարան, Գ. Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 24, վավ. 116¹¹):

2 Դարեգին հաժակ (Չազալյան. 1867—1915)—հրապարակախոս, հասարակական-քաղա-բական գործիչ:

3 Նդիշ Թոփչյան (Երվանդ Թամարյան. 1872—1909)—հասարակական, մշակութային գործիչ:

18

9 հունվ<արի>, 1910
Թիֆլիս

Միքելի Գալուստ,

Շնորհավոր նոր տարի և Մոսկով:

Վաղուց է, ուղարկել եմ Քեզ նակլատնոյը՝ Ազաթանգեղոսով և Փարպեցիով լի արկղը ստա-նալու: Իմացա, որ նակլատնոյը ստացել ես, իսկ արկղը ստացար, թե ոչ՝ տեղեկություն չունիմ: Գրիք երկու տող ի միամտությամբ:

Կանայանին արդեն ասել եմ, և Քեզ էլ ահա դրում եմ, որ Ազաթանգեղոս ուղարկեցի (բո-լորի վրա մակագրելով «այսինչին» Հրատարակչական մասնաժողովի և աշխատողների կող-մից) վեհափառին (և Փարպեցի), Սուրիաս սրբազանին (և Փարպեցի), «Մշակին», «Անահի-տին», «Բաղմավեպին», «Հանդես ամսօրյային», Նորայրին, Տաշյանին, Մադին, Աղոնցին, հա-լաթյանցին, Կ. Պ. պատրիարքին, Օրմանյանին, Լեոյին, Աճառյանին, Կոստանյանին, Թերկաճ-յանին (և Փարպեցի, բաժանորդ է, ինչպես և Օրմանյանը), Գր. Տեր-Հարությունյանին (բաժա-նորդ), Գարեգին սրբազանին, Ներսիսյան դպրոցին, «Հովվին», Բաթումի մի բաժանորդի: Չեմ ուղարկել դեռ, որովհետև հասցեները չգիտեմ, Կոնյեբերին, Մեյբին, Մակերին, Զավախովին, Բենեշկիչին, Սաի կաթողիկոսին, Մանանդյանին, «Византийский Временник»-ին (Պետեր-բուրգ): Անհամար եմ գտնում Մադի միջոցով ուղարկել (նրան նեղություն տալով) Գիտու-թյանց ազադեմիային և Մոսկվ<այի> հնագիտ<ական> ընկերության:

Երոսաղեմի սլատրիարքին տատանվում եմ ուղարկել՝ այնքան <1 անընթ. > այնտեղ կատարվում, որ չգիտեմ, ո՞վ ինչացո՞ւ է, արժե՞ պատվել, թե ոչ:

Քեզ ուղարկված Ազաթ<անգեղոսի> 29 օրինակից այդտեղ տուր «Արարատին», երկու մա-տենադարաններին, Արեղյանին, Մեսրոպ կաթողիկոսին, Ներսես և Նովանդ վարդապետներին—? օրինակ. ուրեմն երկուսիդ տրամադրության տակ կմնա 22 օր<ինակ>:

Իմ կողմից առաջարկում եմ ուղարկել նաև «Սուրհանդակին», «Հորիզոնին», «Արօրին», «Նոր դպրոցին»: Բացի սրանից խնդրում եմ Քեզանից և հ. Գարեգինից՝ ինձ էլ իրավունք տաք (ինչ անունով ուզում եք) մի տասն օրինակ վերցնելու՝ իմ անձնական բարեկամներիս բաժա-նելու համար, որոնց չեմ կարող չբաժանել. իսկ փողով առնելը կղժղարանամ: Հուլյս ունիմ՝ հ. Գարեգինը չի մերժի:

Խորենացու տպագրությունը թիկն ծանր, բայց առաջ է գնում, Շարվում է Ը թերթը (Ա գրքի երկրորդ թերթը)։ Բ գրքի ծանոթությունները խմբագրել է պ. Սեթ Հարությունյանը, և ևս նկատում եմ տեսակ-տեսակ պակասություններ, այն հատկության, որ կասկածի են ենթարկում վարիանտների ճշտությունը։ Սա առաջ է գալիս ոչ թե խմբագրողի անփութությունից կամ անբարեխղճությունից, այլ ևրբեմն չափ լրմբեռնելուց խմբագրական գործը և, որ գլխավորն է՝ ուշադրության ցրված լինելուց։

Այս բավական չէ, Երկու աշխատողները իրանց մեջ վճռել են, որ Բ գրքի մասին իմ նկատողություններն պատասխանե տ. Սեթը. այնպես, որ պ. Աբեղյանի կոնտրոլը միանգամայն վերանում է գրքի այս մասից։ Ես գրել էի պ. Աբեղյանին իմ վարանումներս. նա ինձ հանգրստացնել կամեցավ, բայց ես չհամարեցի, նա գրել էր, թե տոներիս պիտի գա Թիֆլիս, և ես հույս ունեի մանրամասն բացատրելու իմ անվստահության պատճառները, բայց նա չնկավ։ Այսօր նրան առանձին նամակ կգրեմ (պակասավոր խմբագրության օրինակներով) և կխնդրեմ, որ ինձ մոտ կարդա և խորհուրդ անեք։ Դո՛ւնե իմ առաջարկությունս է, որ նյութը Շուշուց ստանա պ. Աբեղյանը և իմ նկատողություններս դարձյալ իրան ուղարկեմ։ Շատ բարեկներս։

Ստ. Մալխասյանց

19

11 հոկտեմբերի, 1911

Թիֆլիս

Սիրելի Գալուստ,

Խորենացու տպագրությունը վերջանալու վրա է։ Բնագիրը շարված, թերթը կապված է. վերջի թերթը կիսատ է մնում. սպասում եմ հատուկ անունների ցանկին, որով լրանա թերթը։ Պակասում է առաջաբանը, որը մի քանի անգամ շտապեցրել եմ. բայց դեռ չեմ ստացել։ Այսպես, թե այնպես՝ իմ աշխատանքը Խորենացու վերջացել է։

Այս պատճառով ուզում եմ Քեդ հետ խորհրդակցել առաջիկայի մասին։ Իմ փափագս, որ դո՛ւն նույնպիսի հրատարակությամբ լույս տեսնեին նաև Կորյունը, Եղիշեն, Փավստոսը և Սեբեոսը՝ թվում է, թե չի իրագործվի, բայց միայն Կորյունը հրատարակելը թե՛ իրագործելի է և թե՛ ստիպողական է։ Մեր հրատարակած երկու գիրքը կոչվեցին առաջին հատորի երկրորդ և չորրորդ գրքեր. Խորենացին կարող ենք կոչել երրորդ, բայց առաջինը չկա, իսկ առաջին բաժանակի և ըստ գաղափարի պետք է լինի Կորյունը։

Կորյունի հրատարակությունը հեշտանում է նրանով, որ Դու բնագիրն արդեն ունիս կաշմած, և ծավալի փոքրության պատճառով քիչ ծախս կպահանջե։ Կորյունը հարկավոր է տպել ու միայն Ա—Բ—Գ գրքեր ունենալու համար, այլև ընդհանուր հրատարակության առաջաբան գրելու և տպագրության հանգամանքները բացատրելու նրա ճակատին կգրվի հորելյանական ընծան՝ ձոնը Մեսրոպ Մաշտոցին, Խրիմյան Հայրիկի կոնդակը, գուցե և Սուրբիաս սրբազանի լուսանկարը, երբ այդտեղից համաձայնություն տաք։

Ուստի խնդրում եմ Քեդանից, եթե համաձայն ես իմ առաջարկությանս՝ տեսնվես Սուրբիաս սրբազանի հետ և խնդրես, որ Կորյունի տպագրության ծախսն էլ հանձն առնե (Խորենացիով մեր բոլոր փողերը կվերջանան. հաշիվը տպագրությունից հետո մանրամասն կզեկուցանեմ)։ Տպագրությունը կարժենա, ճակատի դարդարանքներով հանդերձ. մոտավորապես 3—400 հոսիլի։ Սուրբիաս սրբազանը տրտունջներ ունի մեր դեմ՝ գործի ուշանալու պատճառով. ալժմ է, Պատմագրքի մասին տեղի ունեցած գրագրություններն ուղարկել է «Լուսավիշ» տպելու։ Երբ տպվեն՝ ես էլ իմ կողմից բացատրություն կգրեմ, և կտեսնվի, որ Սուրբիաս սրբազանի նվիրած գումարը հալալ ձեռքերում է գտնվել և արժանավոր գործադրություն գտիլ, որ ուշանալը, ալսպիսի գործի համար և նման հանգամանքներում՝ անխուսափելի էր։

Տրտունջը և լրագրական բանակոխվել իրանց կողմից, իսկ գործն յուր կողմից. մեկը մյուսին թող չխանգարեն։ Խոսիր հետը. եթե համաձայնի՝ անմիջապես պատրաստվենք Կորյունի տպագրության. հակառակ դեպքում ես, միամտելով «Պատմագիրք հայոց» հրատարակության ծանրությունից՝ ձեռք կղարնիմ ուրիշ աշխատությունների, որոնք վաղուց ծրագրել եմ, բայց միշտ հետաձգում էի. որոշած լինելով աղատ լինել Պատմագրքի համար։

Պ. Աբելյանից լուր չունիմ։ Ուղարկել եմ նրան 18—20 թերթերը մաքուր տպած. ուղարկել եմ 21-րդի սրբագրությունը նկատողություններովս. խնդրել եմ առաջաբանը, բայց ոչ մի պատասխան։

Շատ բարեներ ինձանից ու ընտանիքիցս։

Քն Ստ. Մալխասյանց

1 «Լուսավիթ» 1911 թ. № 1—2-ում (էջ 124) «Խմբագրության պատասխաններ» խորագրի տակ հայտնվում է Սուքիաս Պարզյանին, որ ստացվել են նրա ուղարկած գրագրությունները «Պատմագրերի» հրատարակության մասին և որ դրանք կապագրվեն ամսագրի առաջիկա համարից։ Այդ գրագրությունները, սակայն, «Լուսավիթ» չեն տպագրվել, քանի որ վերոհիշյալ համարին հաջորդել է 1912 թ. հրատարակված մի պրակ, որից հետո ամսագիրն այլևս չի հրատարակվել։

20

23 հունիսի, 1913

Քիֆլիս

Սիրելի Գալուստ,

Երեկ ծրարով ուղարկեցի Քեզ Խորենացու առաջաբանը և հատուկ անունների ցանկը, առանց վերջին երկու թերթի, որոնք արդեն ստորագրել եմ տպելու համար և պատվիրել եմ, որ տպելուց հետո անմիջապես 5-5 օրինակ Քեզ ուղարկեն։

Փա՛ռք Աստուծո. Խորենացին էլ վերջացրինք։

Երեկ Մ. Աբելյանին նամակ ուղարկեցի Երևան և նույնը հայտնելուց հետո գրեցի նաև, որ ձեռքիս եղած փողը չի բավականանա բոլոր վճարքներն անելու և որ հաշիվը կներկայացնեմ սեպտեմբերին Սուքիաս եպիսկոպոսին։ Համենայն դեպս, ավելացրի, իրանց հասանելիքը ամբողջապես կստանան, բայց մի քիչ ուշ, այսինքն սխալեմքերին, երբ հաշիվները կպարզվեն։

Այժմ Քեզ գրում եմ՝ Մ. Աբելյանին հայտնելու համար, իբրև լրացուցիչ տեղեկություն՝ հետևյալը։ Երեկ երեկո հրատարակության հաշիվները մոտավորապես կատարելով համոզվեցի, որ փողը կբավականանա մեր բոլոր պարտականությունները կատարելու, որովհետև ավելի քան 1000 ո. կանխիկ փող կա (որից մեծ մասը մուրհակով ՄՆ. Մարտիրոսյանի վրա)։ Դրաբախտաբար ՄՆ. Մարտիրոսյանը Պետերբուրգ է գնացել, և անկարելի է հրատարակության ամբողջ հաշիվը, յուր տպարանին վերաբերյալ, ստանալ, ուստի կամա-ակամա կատարյալ հաշվետվությունը պիտի հետաձգենք մինչև սեպտեմբեր, երբ նա այստեղ կլինի և ես ամառանոցից կվերադառնամ։ Գուցե նրա կողմից հաշիվ ներկայացնելիս տարաձայնություններ ծագեն. ի միջի այլոց, ինչպես հիշում ես՝ նա խնդրել էր աշխատանքի գինը ավելացնել ընդդեմ մեկը կնքած գրավոր պայմանի, և մենք խոստացել էինք, առանց սակայն քանակը որոշելու. ես կաշխատեմ գործը համաձայնություն վերջացնել, առանց սակայն վճարական քալ անելու Ձեր երկուսիդ համաձայնությունը չառած։

Վաղը առավոտ մեկնում եմ Ախալցխա. կվերադառնամ օգոստոսի 20—22-ին։ Եթե կարիք ունենաս՝ ամառս ինձ գրիր ուղղակի Ախալցխա։

<Ստ. Մալխասյանց>

21

12 հունվարի, 1914

Քիֆլիս

Սիրելի Գալուստ,

Ստ. Կանյանի ձեռքով կստանաս՝ 1) մի նամակ, որ մոտ մի շաբաթ առաջ եմ գրել, ղեկավարելով 3 օրինակ Խորենացու և Ղ. Փարպեցու ու Ազաթանգեղոսի մի առաքման. 2) Պատմագրերի հրատարակության հաշիվը. 3) Պատմագրերի հաշվեմատյանը. 4) Տպարանատեր Մարտիրոսյանի հաշիվն ու նամակը և վերջապես 5)՝ ներկա նամակս։

Առաջին նամակովս խնդրել եմ տեղեկություն թե քանի՞ օրինակ Ղ. Փարպեցի և Ազաթանգեղոս եմ ուղարկել Քեզ այն սնդուկով, որի մեջ գրված էին 2-2 օրինակ փառակազմ Ղ. Փար-

սլեցի և Ագաթանգեղոս: Տպված գրքերի հաշիվը կազմելիս տեսա, որ այս երկու գրքից բավական թվով օրինակներ պակասում են, որոնք, անշուշտ, անդուկով ուղարկածներն են:

Պատմագրքի հրատարակության հաշիվն ստուգեցինք մատյանով. անգործագրերը, արդարացուցիչ տօկումենտները ուղարկել անհարմար համարեցի, որովհետև որևէ կորուստի զեպում ես զրկված կլինեմ ծախսերը ապացուցանելու հնարավորությունից: Եթե որևէ ծախսի կամ առհասարակ բոլոր ծախսերի նկատմամբ պարբերական արդարացուցիչ տօկումենտների՝ կամ առտուղից մարդ պետք է պա (օր. Գարեգին վարդապետը) և ինձ մոտ տեսնե, կամ ես էլ միաժին գամ և անձամբ բերեմ: Եթե հաշվի դեմ որևէ առարկություն չունիք—ձեռնպահություն արդարացուցիչ տօկումենտների մասին, որոնց համար ասել եմ, որ պահվում են մոտս, ուրեմն որ ես պատասխանատու եմ՝ հաշվի գումարների և արդարացուցիչ տօկումենտների համաձայնության—այս գեպում դուք երկուսդ էլ ստորագրեցեք և ներկայացրեք Սուրբազանին:

Մե. Մարտիրոսյանի հաշվից և նամակից կտեսնես, որ նա մեղանից պահանջում է շատ ավելի, քան որ գրավոր պայմանավորվել էինք՝ 560 ոտլի ավելի. ես քանիցս երկուսիդ հայտնել եմ գործի տպագրության ընթացքում, որ նա պանդառվել է պայմանավորված զնի փոքրության մասին, խնդրել է ավելացնել, և ես, երկուսիդ համաձայնությանմբ, հայտնել եմ նրան թի կավելացնենք, բայց թե ինչքան՝ ոչինչ չեմ ասել, հայտնելով թե դա ընկերներիս ընդհանուր համաձայնությունից կախումն ունի: Ես կարծում էի բավականանալ թերթին 4 ո. ավելացնելով, այնինչ նա թերթին 1 է ո. հավելումն է պահանջում և երգում է անում, որ այդ կերպով էլ նա ոչինչ չէ աշխատում, այլ միայն յուր ծախսերն է ծածկում: Նա նույնիսկ առաջարկում է կատարված աշխատանքը ցույց տալ գործին տեղյակ մարդկանց և գնահատել ապ, և ինքը համաձայն կլինի նրանց վճռին: Ես կարծում եմ, գործը չօգտագուշտ, միջնորդ պատ պետական դատարանի չհասցնելու համար պարելի է առաջարկել թերթին 6 ո. հավելում, այնպես որ նրա մուրհակի և տոկոսի փողը գրեթե ծածկե նրա պահանջը: Այս մասին խնդրում եմ շուտով ուղարկեք ձեր որոշումը, որպեսզի վերջացնենք հաշիվներն ու տպագրենք:

Հաշիվը տպագրելիս՝ սկզբում մի քանի տող կլինի այն մասին, որ հրատարակությանը ձեռնարկելիս՝ կող արինք հասարակության, դրամական օժանդակություն խնդրելով: Սակայն Սուրբազանի ինքնահոգաբար առատ նվերը հնարավոր դարձրեց անմիջապես գործի օժանդակելու, առանց ուրիշների կողմից օժանդակության սպասելու: Նաև բացատրել տպագրության ուղանալու պատճառները:

Եթե Գարեգին վարդապետը այստեղ գա, ինչպես ասում է Կանայանը, այս հաշվը պատճեններ նրան կներկայացնեմ և տօկումենտները ցույց կտամ: Ցտեսություն և առողջություն:

Քա Ստ. Մալխասյանց

ПИСЬМА СТЕПАНА МАЛХАСЯНЦА ГАЛУСТУ ТЕР-МКРТЧЯНУ

А. А. ЗАКАРЯН

Резюме

Публикуемые письма—ценный материал, освещающий подробности создания книг серии «Армянские историки». Эти письма также затрагивают некоторые вопросы арменоведения, орфографии, связанные с изданием этих книг, содержат интересные сведения об общественной жизни того времени. В то же время они являются незаменимым источником для изучения жизни и деятельности Малхасянца-ученого.

Письма хранятся в Матенадаране, в архивном фонде Галуста Тер-Мкртчяна.